Food and Agriculture Organization of the United Nations

# ԳԵՆԴԵՐԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ **ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԵՐԿԻՐԸ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՍԵՐԻԱ

ԵՐԿԻՐԸ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ



# Գենդերը, գյուղատնտեսությունը եւ
# գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԻ ԵՎ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**Բուդապեշտ, 2017 թվական**

Այս տեղեկատվական նյութում օգտագործված անվանումները եւ նյութի ներկայացումը չեն ենթադրում Միավորված ազգերի կազմակերպության Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) անունից որեւէ կարծիքի արտահայտում, որը կվերաբերեր որեւէ երկրի, քաղաքի կամ տարածքի կամ դրա իշխանությունների իրավական կամ զարգացման կարգավիճակին, կամ որը կվերաբերեր սահմանների սահմանագծմանը կամ որոշարկմանը: Կոնկրետ ընկերությունների կամ արտադրողների արտադրանքների հիշատակումը, անկախ դրանց արտոնագրված լինելու կամ չլինելու հանգամանքից, չի ենթադրում այն, որ դրանք ՊԳԿ-ի կողմից արժանացել են հավանության կամ խորհուրդ են տրվում` գերադասվելով նմանատիպ բնույթի այլ ապրանքներից, որոնք չեն հիշատակվել սույն զեկույցում:

Այս տեղեկատվական նյութում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակ(ներ)ին եւ պարտադիր չէ, որ արտահայտեն ՊԳԿ-ի տեսակետները կամ քաղաքականությունները:

© ՊԳԿ, 2017

ՊԳԿ-ն խրախուսում է այս տեղեկատվական նյութում ներկայացված բովանդակության օգտագործումը, բազմացումը եւ տարածումը: Բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ նշվում է հակառակը, այս նյութը կարելի է պատճենահանել, ներբեռնել եւ տպել անհատական ուսումնառության, հետազոտության եւ դասավանդման նպատակներով` պայմանով, որ ՊԳԿ-ն պատշաճ ձեւով ճանաչվի եւ նշվի որպես այս նյութի աղբյուր եւ հեղինակային իրավունքի սեփականատեր, եւ որ որեւէ կերպ չի ենթադրվում, որ ՊԳԿ-ն հավանություն է տալիս օգտագործողների տեսակետներին, ապրանքներին կամ ծառայություններին:

Տեքստի թարգմանության եւ ադապտացման իրավունքների, վերավաճառքի եւ առեւտրային այլ նպատակներով օգտագործման իրավունքների համար բոլոր դիմումները պետք է ուղղվեն հետեւյալ կայքէջի միջոցով` www.fao.org/contact-us/licence-request, կամ ուղարկվեն էլ-փոստի հետեւյալ հասցեին` copyright@fao.org:

ՊԳԿ-ի տեղեկատվական նյութերը հասանելի են ՊԳԿ-ի վեբկայքում (www.fao.org/publications) եւ կարող են ձեռքբերվել publications-sales@fao.org-ի միջոցով:

**Նպատակը**

Այս զեկույցը աշխատանքային փաստաթուղթ է, որի նպատակն է ՊԳԿ աշխատակիցներին եւ ազգային մակարդակում գործընկերներին տեղեկացնել գենդերային հիմնական խնդիրների վերաբերյալ, որոնք առկա են Հայաստանում գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման ոլորտներում: Նախատեսվում է, որ այն պարբերաբար թարմացվելու է:

Ցանկացած մեկնաբանության, առաջարկի կամ թարմացման համար խնդրում եմ կապ հաստատել Միավորված ազգերի կազմակերպության Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ (ՊԳԿ ԵԿԱՏԳ).

FAO-RO-Europe@fao.org

Շապիկի լուսանկարները` ©FAO / Biayna Mahari; ©FAO / Johan Spanner

# Բովանդակություն


Հապավումներ ii

Աղյուսակներ iii

Երախտիքի խոսք iv

Համառոտ ամփոփում v

1. Ներածություն 1
   - 1.1 Գենդերային գնահատման նախապատմությունը 1
   - 1.2 Մեթոդաբանությունը 1
   - 1.3 ՊԳԿ-ն Հայաստանում 2

2. Հայաստանի Հանրապետության հակիրճ նկարագիր 3
   - 2.1 Սոցիալ-տնտեսական նկարագիր 3
   - 2.2 Քաղաքական եւ ինստիտուցիոնալ նկարագիրը 4
   - 2.3 Ժողովրդագրական պատկերը 9
     - 2.3.1 Սեռերի հարաբերակցություն, կյանքի սպասվող տեւողություն եւ առողջություն 9
     - 2.3.2 Միգրացիա 10

3. Գենդերային իրավիճակը եւ գյուղական տնտեսությունը 11
   - 3.1 Կրթություն 11
   - 3.2 Ֆորմալ եւ ոչ ֆորմալ աշխատանքի շուկաները Հայաստանի Հանրապետության գյուղական շրջաններում 12
     - 3.2.1 Աշխատանքի շուկա 12
     - 3.2.2 Ընտանեկան ֆերմերային տնտեսություն 14
   - 3.3 Ենթակառուցվածքներն ու տեխնոլոգիաները գյուղական բնակավայրերում եւ դրանց կապը ծախսվող ժամանակի հետ 15
   - 3.4 Գույքային իրավունքներ եւ հողի նկատմամբ իրավունքների դե ֆակտո իրացում 16
   - 3.5 Վարկերի եւ ձեռներեցության հասանելիություն 17
   - 3.6 Տեղեկատվության, տեղաշարժի, շուկաների եւ գյուղատնտեսական միջոցների մատչելիություն 18

4. Պարենային ապահովություն եւ սնուցում 21

5. Գենդերային եւ սոցիալական կարգավիճակը Հայաստանի գյուղական շրջաններում 23
   - 5.1 Գյուղաբնակ կանանց կարգավիճակը 23
     - 5.1.1 Կանանց կարգավիճակը Հայաստանի գյուղական շրջաններում. համառորեն պահպանվող կարծրատիպեր 23
     - 5.1.2 Կանանց կարգավիճակը Հայաստանի գյուղական շրջաններում. Որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություններ 24
   - 5.2 Համայնքային աշխատանք՝ հաջակցություն գյուղաբնակ կանանց հզորացման 25

6. Եզրակացություններ եւ առաջարկություններ 29
   - 6.1 Եզրակացություններ 29
   - 6.2 Առաջարկություններ 34
     - 6.2.1 Առաջարկություններ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը 34
     - 6.2.2 Առաջարկություններ ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը և այլ պետական կառույցներին: 37

Հավելված 1. Օգտագործված գրականության ցանկ 41

Հավելված 2. Հարցազրույցների մասնակցած անձանց եւ կազմակերպությունների ցանկ 47

## Հապավումներ

| | |
|---|---|
| ԱԶԲ | Ասիական զարգացման բանկ |
| ԱՀԿ | Առողջապահության համաշխարհային կազմակերպություն |
| ԱՀԿՄԿ ԱՀԽ | Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոնի Ագրոբիզնեսի հարցերով հետազոտական խումբ |
| ԱՄԿ | Աշխատանքի միջազգային կազմակերպություն |
| ԱՄՆ ԳԴ-ՄԱԾ | ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի Մարքեթինգի աջակցության ծրագիր |
| ԱՄՆ դոլար | Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար |
| ԱՄՆ ՄԶԳ | ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն |
| ԱՄՔՈՐ | ԱՄՆ Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե |
| ԱնտԱԾ | Անտառի ազգային ծրագիր |
| ԱՎԾ | Ազգային վիճակագրական ծառայություն |
| ԲԶՄՀ | Բնակչության եւ զարգացման միջազգային համաժողով |
| ԳԱԻ | Գենդերային անհավասարության ինդեքս |
| ԳԱՄԿ | Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ |
| ԳԱՖ | Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա |
| ԳԳՃԻ | Գլոբալ գենդերային ճեղքվածքի ինդեքս (ցուցանիշ) |
| ԳԹԽ | Գենդերային հարցերով թեմատիկ խումբ |
| ԳՀԻ | Գենդերային հավասարության ինդեքս |
| ԳՄՀԸ/GIZ | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն |
| ԳՆ | Գյուղատնտեսության նախարարություն |
| ԳՈւՀ | Գնողունակության համարժեքություն |
| ԳՊ | Գենդերային հարցերով պատասխանատու |
| ԳՓՁԱԳԶ | Գյուղական ձեռնարկությունների եւ փոքրածավալ առեւտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր |
| ԳՔՓ | Գենդերային քաղաքականության փաստաթուղթ |
| ԵԱԾՇ | ՊԳԿ Երկրի առաջնահերթությունների ծրագրային շրջանակ |
| ԵԱՀԿ | Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն |
| ԵԱՏՄ | Եվրասիական տնտեսական միություն |
| ԵՀՔ | Եվրոպական հարեւանության քաղաքականություն |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԶԱԳ | Զարգացման ավստրիական գործակալություն |
| ԶՀՇԳ/SDC | Զարգացման եւ համագործակցության Շվեյցարիայի գործակալություն |
| ԿՃՑ | Կենսական նշանակության ճանապարհային ցանց |
| ԿՆԽՎԿ | Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW) |
| ԿՓՖԱ | Կապանի փոքր ֆերմերների ասոցիացիա |
| ՀԱԵ | Համախառն ազգային եկամուտ |
| ՀԱՊԿ | Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀԳՌԿՄԾ | Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության ծրագիր |
| ՀԵԿԱ | Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀԿՀԱԱՇՄ | Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ՄԱԲՀ | ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ |
| ՄԱԶԾ | Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |
| ՄԱԿ ՀԹ | Միավորված ազգերի կազմակերպության Հայաստանի թիմ |
| ՄԱԿ ՓԳՀ | ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար |
| ՄԱԿԶԱԾ | ՄԱԿ-ի Զարգացման աջակցության ծրագիր |
| ՄԶՀ | Մարդկային զարգացման համաթիվ |
| ՄՄԿ | Միգրացիայի միջազգային կազմակերպություն |
| ՅՈՒՆԻՍԵՖ | ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ |
| ՆԱՏՕ | Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպություն |
| ՊԳԿ | Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպություն |
| ՋՕՄ | Ջրօգտագործողների միություններ |
| ՍԿՌԿՑ | Սյունիքի կանանց ռեսուրս կենտրոնների ցանց |
| ՏԿԶՆ | Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն |
| ՏՀԶԿ | Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպություն |
| ՔՀՀ | Քաղաքացիական հասարակության հաստատություն |
| ՖԿ | Ֆերմերային կազմակերպություն |
| CARD | Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն |
| IFAD | Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ |
| SIGI | Սոցիալական հաստատությունների եւ գենդերային ինդեքս |

# Աղյուսակներ


| | |
|---|---|
| Աղյուսակներ 1: | Հայաստանի Հանրապետության իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերը եւ քաղաքական հանձնառությունները, որոնք ուղղված են գենդերային անհավասարությունների կրճատմանը |
| Աղյուսակներ 2: | Կրթության համակարգում ներգրավվածությունը, 2013/14 ուստարի |

## Երախտիքի խոսք

Այս զեկույցի պատրաստմանն իրենց նպաստն են բերել Ագապի Հարությունյանը (տվյալների նախնական հավաքում եւ զեկույցի առաջին նախագծի պատրաստում), Ֆիոնա Միհանը (վերանայում) եւ Զինա Սարգիզովան (վերջնական զեկույց):

Հետեւյալ անհատները զեկույցի նախագծի կատարելագործման համար իրականացրել են տեքստի՝ վճռորոշ նշանակություն ունեցող վերանայում.

- Հայնալկա Պետրիչ, Գենդերային եւ զարգացման հարցերով պատասխանատու, ESP, ՊԳԿ.
- Դոնո Աբդուրազակովա, Գենդերի եւ սոցիալական պաշտպանության հարցերով մասնագետ, ՊԳԿ ԵԿԱՏԳ.
- Արոա Սանտիագո Բաուտիստա, Գենդերային հարցերով ծրագրերի մասնագետ, ՊԳԿ ԵԿԱՏԳ:

**Նպատակը**

Այս զեկույցը աշխատանքային փաստաթուղթ է, որի նպատակն է ՊԳԿ աշխատակիցներին եւ ազգային մակարդակում գործընկերներին տեղեկացնել գենդերային հիմնական խնդիրների վերաբերյալ, որոնք առկա են Հայաստանում գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման ոլորտներում: Նախատեսվում է, որ այն պարբերաբար թարմացվելու է:

Ցանկացած մեկնաբանության, առաջարկի կամ թարմացման համար խնդրում եմ կապ հաստատել Միավորված ազգերի կազմակերպության Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ (ՊԳԿ ԵԿԱՏԳ).

FAO-RO-Europe@fao.org

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն ներկայացուցչի օգնական Գայանե Նասոյանին և գենդերային հարցերով պատասխանատու Սոսե Ամիրխանյանին:

Երախտապարտ ենք նաև ՀՀ կառավարության սոցիալական վարչության պետ տկն Աստղիկ Միրզախանյանին, և Հայաստանի Գենդերային թեմատիկ Խմբի ներկայացուցիչներին զեկույցի վերաբերյալ դիտարկումներ ներկայացնելու համար:

# Համառոտ ամփոփում

**«Գենդերային հավասարությունը Միավորված ազգերի կազմակերպության Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ)՝ սնուցման մակարդակները բարձրացնելու, գյուղատնտեսական արտադրողականությունը եւ բնական ռեսուրսների կառավարումը բարելավելու միջոցով բոլորի համար պարենային ապահովության հասնելու եւ գյուղական շրջանների բնակչության կյանքը բարելավելու մանդատի տեսակետից ունի առանցքային նշանակություն»: ՊԳԿ-ն իր նպատակներին կարող է հասնել միայն այն դեպքում, եթե միաժամանակ աշխատի գենդերային հավասարության ուղղությամբ եւ աջակցի գյուղատնտեսության մեջ եւ գյուղական շրջանների զարգացման գործում կանանց բազմազան դերերի կատարմանը: Գենդերային հավասարությունը ոչ միայն էական միջոց է, որով ՊԳԿ-ն կարող է հասնել իր մանդատի իրագործմանը, այլ նաեւ մարդու հիմնարար իրավունք է»(FAO, 2013a, էջ 1):**

*ՊԳԿ Գենդերային հավասարության քաղաքականություն*

Գենդերային հավասարությունը աղքատության եւ սովի վերացման բանալի է, ինչպես դա ՊԳԿ-ի կողմից ցույց է տրվել ողջ աշխարհում իրականացված հետազոտությունների միջոցով: ՊԳԿ-ն հանձնառու է իր ծրագրային միջամտությունների միջոցով նպաստել գենդերային անհավասարությունների կրճատմանը, եւ այս զեկույցը պատրաստվել է որպես կազմակերպության ջանքերի մի մաս՝ ստեղծելու ապացուցային հիմք եւ գիտելիք՝ ՊԳԿ Գենդերային հավասարության քաղաքականությանը համահունչ (FAO, 2013a, էջ 1): Միայն գենդերային ճեղքվածքը փակելով է հնարավոր իրականություն դարձնել կայուն գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման ռազմավարությունների ողջ ներուժը:

Սույն Գենդերային գնահատումն արդեն իսկ որպես ռեսուրս է ծառայել ՊԳԿ-ի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ համագործակցության նպատակով մշակված Երկրի առաջնահերթությունների ծրագրային շրջանակի համար, որը հաստատման գործընթացում էր այն ժամանակ, երբ այս զեկույցը վերջնական տեսքի էր բերվում: Զեկույցի նպատակներից է նաեւ տեղեկացնել ՊԳԿ մասնագետներին, ՄԱԿ-ի այլ գործակալությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակիցների, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման ոլորտում աշխատող ՀԿ-ների եւ պատասխանատուների: Ի հավելումն, այն լայն հանրության շրջանում իրազեկության մակարդակի բարձրացման գործիք է:

Զեկույցը վեր է հանում գենդերային հիմնական անհավասարությունները, որոնք հնարավոր էր գտնել առկա տվյալներում եւ որոնք պետք է նկատի առնեն քաղաքականություն մշակողները եւ ծրագրերի ղեկավարները. զեկույցը բացահայտում է հետագա հետազոտություններ իրականացնելու կարիքը բազմաթիվ ոլորտներում, ներառյալ՝ ծկնաբուծարանները, անտառտնտեսությունը, տեղական ֆերմերների համագործակցությունը եւ կանանց իրական մասնակցությունը ՀՆԱ-ի ստեղծմանը՝ մասնավորապես հաշվի առնելով որպես չվճարվող ընտանեկան ֆերմերներ նրանց բերած հսկայածավալ նպաստը:

Ստորեւ քննարկված հիմնական մարտահրավերների հիման վրա՝ այս զեկույցի վերջում ներկայացված է առաջարկությունների մի համախումբ:

Գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման ոլորտներում հիմնական գենդերային անհավասարությունները.

### 1. Օրենսդրության եւ կիրարկման միջեւ ճեղքվածքը.

- Չնայած գենդերային անհավասարությունները կրճատելու ուղղությամբ վերջին երկու տասնամյակում կառավարության գործադրած ջանքերին, օրենսդրության եւ կիրարկման միջեւ գոյություն ունի ճեղքվածք:
- Դեռեւս անհրաժեշտ են ամուր փոխադարձ կապեր Գենդերային հարցերով գործողությունների ծրագրի եւ գյուղատնտեսության ու գյուղական շրջանների զարգացման գործողությունների պլանների եւ քաղաքականությունների միջեւ:

- Գենդերային անհավասարությունները շարունակում են մնալ հանրայնորեն ընդունված կամ հանդուրժվում են, հատկապես գյուղական շրջաններում, որտեղ, համաձայն արձանագրությունների, գենդերային անհավասարություններն ավելի սուր են, ինչը գենդերային հավասարության վերաբերյալ քաղաքականությունների իրականացումը դարձնում է էլ ավելի դժվար:
- Գյուղատնտեսության հատվածում գենդերային վիճակագրությունն անհրաժեշտ է զգալիորեն կատարելագործել՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Հայաստանի երրորդ եւ չորրորդ պարբերական համատեղ զեկույցների վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումների համաձայն (Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ, 2009 թ.):

## 2. Կանայք գերներկայացված են ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում, ընտանեկան ֆերմաներում չվճարվող աշխատանքներում, եւ տնային գործերում

- Զբաղվածություն ունեցողների մոտավորապես 34.8 տոկոսը ներգրավված է գյուղատնտեսության մեջ, որոնցից մոտ 56 տոկոսը կանայք են (Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, 2015 թվական, էջ 61):
- Գյուղատնտեսության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների շրջանում կանանց մասնաբաժինը կազմում է 82.1 տոկոս՝ ի հակադրություն ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող տղամարդկանց, որոնք կազմում են 60.8 տոկոս (Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, 2015 թվական, էջ 61): Եթե դիտարկում ենք միայն ոչ ֆորմալ զբաղվածությունը, այն դեպքում, երբ տղամարդկանց բաժին է ընկնում գործատուների ավելի քան 80 տոկոսը, կանայք ոչ ֆորմալ զբաղվածության հատվածում կազմում են այսպես կոչված «այլ»-ի 83 տոկոսը (Կանայք եւ տղամարդիկ Հայաստանում, 2015 թվական): Սա կարող է կապված լինել ընտանեկան ֆերմաներում աշխատող եւ չվճարվող կանանց գերներկայացվածության հետ:
- Աշխատաշուկայում առկա է ուղղահայաց եւ հորիզոնական սեգրեգացիա, ինչը հանգեցնում է վարձատրության՝ սեռով պայմանավորված հսկայական անհավասարության, որի դեպքում կանանց վարձատրության միջին չափը կազմում է տղամարդկանց վարձատրության մոտ 65.9 տոկոսը (Կանայք եւ տղամարդիկ Հայաստանում, Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):
- Տղամարդկանց շրջանում երկարաժամկետ աշխատանքային միգրացիայի բարձր մակարդակը ավելացնում է կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունների քանակը, եւ գյուղական ընտանիքների 27.2 տոկոսում գլխավորը կինն է (Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը, ԱՎԾ, 2015 թվական): Հավանականությունը, որ կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունները կհայտնվեն ծայրահեղ աղքատության մեջ, մի փոքր ավելի է, քան տղամարդկանց կողմից գլխավորվող տնային տնտեսությունների դեպքում: Սա տեղի է ունենում մասամբ այն պատճառով, որ գյուղական շրջաններում եկամտի ստեղծման հնարավորությունները կանանց համար ավելի սահմանափակ են, եւ գոյություն ունի սեռով պայմանավորված անհավասար վարձատրություն, սակայն հիմնական պատճառն այն է, որ կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունները որպես կանոն մեկ գլխավոր ունեցող ընտանիքներ են, ինչը սահմանափակում է աշխատունակ տարիքի անձանց թիվը, ովքեր ի վիճակի են իրենց նպաստը բերել ընտանիքի եկամտի ստեղծմանը:
- Ընտանեկան ֆերմաներում ոչ պաշտոնապես աշխատող գյուղացի կանայք Աշխատանքային օրենսգրքով սահմանված որեւէ փոխհատուցում չեն ստանում, օրինակ՝ հիվանդության պատճառով արձակուրդ եւ երեխայի խնամքի նպաստ, քանի որ այդ կանայք համարվում են կամ ինքնազբաղված, կամ ոչ ակտիվ: Գյուղական համայնքներում՝ զբաղվածություն ունեցող կանանց երկու երրորդը դրամային եկամուտ չի ստանում, երբ ինքնազբաղված է («Հայաստանի գենդերային բարոմետր» հետազոտություն, Երեւանի պետական համալսարան, 2015 թվական):
- Ընտանեկան ֆերմաներում շարունակում է գոյություն ունենալ աշխատանքների կարծրատիպային բաժանում, որի դեպքում տղամարդիկ հակված ներգրավվել այնպիսի աշխատանքներում, որոնք պահանջում են զգալի կապիտալ ներդրումներ, ներառյալ՝ սարքավորումներ եւ տեխնոլոգիաներ, ինչպես նաեւ այն աշխատանքներում, որոնք ավելի լավ են վճարվում: Աշխատանքների նման բաժանումն առաջացնում է գյուղատնտեսական ակտիվների եւ որոշումների կայացման նկատմամբ սահմանափակ հասանելիություն եւ վերահսկողություն:

3. **Կանանց համար գյուղատնտեսության վերաբերյալ տեխնիկական գիտելիքների անբավարար հասանելիություն, ներառյալ տեղեկությունների հասու լինելու եւ օժանդակ ծառայություններից ու վերապատրաստման դասընթացներից օգտվելու հետ կապված դժվարությունները**

- Գյուղատնտեսության բնագավառում կանանց կրթության ցածր մակարդակը նշանակում է, որ շատ ավելի փոքր է հավանականությունը, որ նրանք կզբաղեցնեն որոշումներ կայացնող եւ ղեկավար պաշտոններ գյուղատնտեսական ոլորտներում, հետեւաբար՝ գյուղատնտեսության բնագավառում կանանց ձայնը չի լսվում, եւ նրանց կարծիքը չի արտահայտվում քաղաքականության մեջ, ինչը իր հերթին սահմանափակում է նորարարությունները պարենային ապահովության եւ սնուցման ոլորտներում:
- Չնայած հետբուհական եւ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած լինելու հավանականությունն ավելի բարձր է կանանց շրջանում, հավանականությունը, որ վերջիվերջո նրանք կստանան գիտական աստիճան, փոքր է (Կանայք եւ տղամարդիկ Հայաստանում, Վիճակագրական գրքույկ: Երեւան. ԱՎԾ, 2015 թվական), իսկ դոկտորի աստիճան ունեցողների շրջանում կանայք կազմում են ընդամենը 28 տոկոս («Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, 2015 թվական): Համալսարանական մակարդակում գոյություն ունի նաեւ հորիզոնական սեգրեգացիա: Տղամարդկանց թիվը գյուղատնտեսության եւ սննդի արդյունաբերության բնագավառի պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում գերազանցում է կանանց թվին 70/30 տոկոս հարաբերակցությամբ, իսկ գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության եւ մաթեմատիկայի գծով շրջանավարտների միայն 38 տոկոսն է կին («Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, 2015 թվական):
- Կանայք նաեւ սահմանափակ մասնակցություն ունեն գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման վերաբերյալ դասընթացներին, գիտելիքի եւ տեղեկությունների փոխանակմանը: Օժանդակ ծառայությունների թեմայով դասընթացներին կանանց մասնակցության այս ցածր մակարդակի պատճառների մի մասը հետեւյալն է.
    - Տեղեկատվության փոխանակման «տղամարդկանց գերիշխանություն», ինչի հետեւանքով տեղեկատվությունը չի հասնում կին ֆերմերներին.
    - Տղամարդկանց նույնականացումը՝ որպես տնային տնտեսությունների գլխավորներ եւ սեփականության տիրապետողներ. ի հետեւանք, կանայք հիմնականում դիտարկվում են որպես «ֆերմերի կին»՝ որպես ինքնուրույն ֆերմեր ընկալվելու փոխարեն.
    - Սարքավորումներ, տեխնոլոգիաներ եւ տղամարդ կարծրատիպային շղթա
    - Հողի գրանցումը տղամարդկանց անունով՝ որպես «տնային տնտեսությունների գլխավորներ»
    - Կանանց ցածր ինքնագնահատականը այն ոլորտներում, որոնք հանրայնորեն չեն վերագրվում իրենց՝ հիմնվելով գենդերային դերերի եւ կարծրատիպերի վրա:
    - Դասընթացների եւ հանդիպումների անցկացման վայրերը. տրանսպորտային միջոցների հասանելիությունը կանանց համար սահմանափակ է. միջոցառումների անցկացման որոշ վայրեր կարող են կանանց ետ պահել մասնակցելուց, եւ որոշ կանայք գուցե ստիպված լինեն ստանալ իրենց ամուսինների թույլտվությունը:

4. **Ենթակառուցվածքներ եւ ժամանակի օգտագործում**

- Քանի որ տնային տնտեսություններում կանայք ջրի հիմնական օգտագործողներն են, ինչը կապված է կանանց գենդերային դերերով պայմանավորված կենցաղային աշխատանքների հետ, նրանք լրջորեն տուժում են ջրի սպառման սահմանափակումներից (ԱՉԲ (2015), Հայաստանի գենդերային գնահատում): Այն դեպքերում, երբ չկա կենտրոնացված ջրամատակարարում, կանայք նաեւ պատասխանատու են ձեռքով ջրի տեղափոխման համար, ինչը հանգեցնում է նրանց աշխատաժամանակի լրացուցիչ ծանրաբեռնման (ԱՉԲ (2015), Հայաստանի գենդերային գնահատում):

- Ենթակառուցվածքների զարգացումը եւ տնային տնտեսությունների արդիականացումը ավելի ցածր մակարդակի է գյուղական շրջաններում, ներառյալ՝ լվացքի մեքենաների, սպասքի լվացման մեքենաների եւ կենցաղային այլ տեխնիկայի օգտագործումը, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների սահմանափակ օգտագործումը եւ նրանց սահմանափակ շարժունակությունը:
- Սա անմիջական ազդեցություն ունի գյուղացի կանանց ծանրաբեռնվածության վրա, քանի որ կենցաղային աշխատանքները եւ վերարտադրողական գործառույթները կարծրատիպերի ուժով կապվում են կանանց գենդերային դերերի հետ: Կանանց կենցաղային ծանրաբեռնվածությունը երկուշաբթիից կիրակի կազմում է օրական 6:06 ժամ, մինչդեռ քաղաքային բնակավայրերում ապրող կանանց դեպքում այս ծանրաբեռնվածությունը կազմում է օրական 4:53 ժամ, իսկ գյուղացի տղամարդկանց դեպքում՝ 2: 37 ժամ («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):

### 5. Հողերի մեծ մասը գրանցված է եւ կառավարվում է տղամարդկանց կողմից, իսկ կանանց կողմից հողի սեփականության նկատմամբ իրենց իրավունքների դե ֆակտո իրացումը բախվում է խոչընդոտների:

- Հողի սեփականության նկատմամբ կանանց սահմանափակ հասանելիությունը բացատրվում է հետեւյալով.
  - Գրանցման գործընթաց. Չնայած հողը քաղաքացիներին հատկացվել է անկախ նրանց սեռից, փաստացի բաշխումը եւ գրանցումը կատարվել են այն մարդկանց միջեւ եւ անունով, որոնք համարվել են «տնային տնտեսությունների գլխավոր»:
  - Պատրիլոկալ ամուսնություններ. Պատրիլոկալ են անվանվում այն ամուսնությունները, որոնց դեպքում հարսը տեղափոխվում է ամուսնու տուն՝ ապրելու վերջինիս ընտանիքի հետ. դրանք առավել տարածված են գյուղական բնակավայրերում: Ամուսնության այսպիսի ավանդական տեսակի դեպքում կանայք սովորաբար չեն պահանջում հողի սեփականության իրենց իրավունքը ո՛չ իրենց սեփական ընտանիքներում, ո՛չ էլ նոր խորթ ընտանիքներում, որովհետեւ մտավախություն ունեն, որ դա կարող է դիտվել որպես իրենց ընտանիքների հետ առճակատում:
  - Ժառանգության հետ կապված գործելակերպեր. Գոյություն ունի հողը տղա ժառանգներին տալու նախապատվություն, հատկապես պատրիլոկալ ամուսնությունների համատեքստում, երբ սովորաբար որդիներն են մնում ընտանիքում, եւ ակնկալվում է, որ նրանք են վարելու ընտանեկան տնտեսությունը:
  - Գյուղական բնակչության, հողի մասնագետների եւ քաղաքացիական ծառայողների՝ հողի նկատմամբ կանանց իրավունքների մասին գիտելիքի պակաս:
- Կանանց՝ հողի սեփականության իրավունքից դե ֆակտո սահմանափակ կերպով օգտվելն անմիջական հետեւանքներ ունի կանանց համար հենց այդ հողի օգտագործման վերաբերյալ որոշումներ կայացնելու, օժանդակ ծառայությունների եւ փոխառության համար գրավի եւ ձեռներեցությամբ զբաղվելու հասանելիության առումով:
- Դեռեւս չկան հողի գրանցման վերաբերյալ ըստ սեռի ապախոշորացված տվյալներ, այդուհանդերձ, գյուղերում տնային տնտեսությունների ընդամենը 26.5 տոկոսն են գլխավորում կանայք («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):

### 6. Վարկային միջոցների եւ ձեռներեցության սահմանափակ հասանելիություն

- Կանանց համար սարքավորումների եւ տրանսպորտային միջոցների սահմանափակ հասանելիությունն ու դրանց նկատմամբ սահմանափակ հսկողությունը խոչընդոտում են եկամուտ վաստակելու նրանց հնարավորությունները եւ շուկաների հասանելիությունը:
- Քաղաքային ու մեծ շուկաների, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների անհասանելիությունը կարծրատիպային պատկերացումների պատճառով:
- Այլ խոչընդոտներ, որ կանայք ստիպված են հաղթահարել նախքան գործարարությամբ զբաղվելը, ներառում են անորոշության զգացումը եւ ռիսկի

դիմելուց խուսափելը, պակաս ինքնավստահությունը այն ոլորտներում, որոնք սոցիալական կամ կարծրատիպային առումով չեն վերագրվում կանանց, գործարար կապերի բացակայությունը, տնտեսության մեջ եւ մասնավորապես բիզնեսում կանանց դերի ու մասնակցության վերաբերյալ արմատացած ու պահպանվող կարծրատիպերը:

- Նյութական պատճառներից են՝ վարկեր ստանալու դժվարությունները, դրամական միջոցների ու գրավի համար գույքի սահմանափակ հասանելիությունը, ծանր տոկոսադրույքները, անբարենպաստ բիզնես միջավայրը, շարժունակության հետ կապված խոչընդոտները, մեծ շուկաների սահմանափակ հասանելիությունը եւ բիզնեսը հեշտացնելու նպատակով պետական պաշտոնյաներին տրվող ոչ պաշտոնական վճարումները (Գենդերային իրավիճակի գնահատում, ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան):
- Արտադրական ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը լուրջ խոչընդոտ է գյուղաբնակ կանանց համար՝ գյուղատնտեսական ձեռներեցությամբ կամ ֆերմերային տնտեսության կառավարմամբ զբաղվելու համար: Օրինակ՝ գյուղաբնակ կանանց համար քիչ հասանելի է կամ հասանելի չէ գյուղատնտեսական տեխնիկան, ինչպիսիք են՝ տրակտորները, կոմբայնները եւ հնձիչ մեքենաները: Տեխնիկան կարծրատիպորեն կապված է տղամարդու գենդերային դերի հետ («Զրից դեպի շուկա» բաղադրիչի գենդերային մոտեցումները, ՀՄՀ-Հայաստան, հունվար, 2011 թվական): Գյուղական բնակավայրերում մեքենաների ավելի քան 95 տոկոսի սեփականատերերը, ինչպես նաեւ մարզերում գյուղատնտեսական տեխնիկա վարողների 100 տոկոսը տղամարդիկ են («Զրից դեպի շուկա» բաղադրիչի գենդերային մոտեցումները, ՀՄՀ-Հայաստան, հունվար, 2011 թվական):
- Մատակարարների հետ աշխատելը եւ գյուղերից դուրս գտնվող խոշոր շուկաներից օգտվելը նույնպես կապվում են տղամարդկանց գենդերային դերերի հետ:

## 7. Պարենային ապահովություն եւ սնուցում

- Փաստերով հիմնավորված է, որ կանանց գլխավորությամբ աղքատ ընտանիքներում երեխաները սնուցման ավելի լավ արդյունքներ են ունենում, քան տղամարդկանց գլխավորությամբ ընտանիքներում, եւ երբ կանանց հնարավորություններն ընդլայնվում են, բարելավվում է ողջ ընտանիքի սնուցումը (Էյլին Քենեդի եւ Փոլին Փիթըրս, 1992 թ.):
- Աշխատանքի բաշխման, ռեսուրսների հասանելիության, սեփականության եւ տնային տնտեսության մեջ իսկողության հարցերում գենդերային անհավասարություններն անմիջական ազդեցություն ունեն ողջ ընտանիքի առողջության վրա: Երբ թե՛ մայրերը եւ թե՛ հայրերը կիսում են պատասխանատու ծնող լինելու պարտականությունը, բարելավվում են նաեւ ողջ ընտանիքի առողջությունն ու սնուցումը:

## 8. Գյուղական բնակավայրերում կանանց ցածր կարգավիճակը եւ պահպանվող գենդերային կարծրատիպեր

- Կանայք սովորաբար ընկալվում են երեխաներին խնամելու եւ կենցաղային աշխատանքների հետ՝ անկախ նրանից՝ աշխատում են տնից դուրս, թե ոչ, իսկ տղամարդիկ սովորաբար ընկալվում են որպես իրենց ընտանիքի տնտեսական բարեկեցության ու գոյատեւման համար պատասխանատու՝ որպես հիմնական կերակրողը եւ ընտանիքի գլխավորը (Հայաստանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, «Գենդերային իրավիճակը Հայաստանում», 2005 թ.): Սա ուղղակիորեն կապված է կարծրատիպային գենդերային դերերի հետ եւ անմիջական ազդեցություն ունի ռեսուրսների ու տնտեսական հնարավորությունների հասանելիության եւ չվարձատրվող, տնային գործերում եւ վերարտադրողական գործառույթի կատարման հարցերում կանանց իսկայական ծանրաբեռնվածության վրա: Սա կարող է հանգեցնել ժամանակի բացակայության, կանանց՝ եկամտաբեր գործունեության մեջ ներգրավվելու կարողությունների սահմանափակման, կանանց ինքնավստահության նվազեցման այնպիսի ոլորտներում, որոնք կարծրատիպորեն նրանց չեն վերագրվում, եւ կանանց տնտեսական կախվածության:
- Յուրաքանչյուր աղջիկ երեխայի հաշվով 1.13 տղա նորածնի սեռային հարաբերակցությամբ եւ 100 կենդանի ծննդին 27.5 հղիության արհեստական ընդհատմամբ ու մեռելածնությամբ հանդերձ՝ Հայաստանում դեռեւս տարածված

է հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումը:[1] Սա ապացույց է տղաներին աղջիկներից գերադասելու եւ հասարակության մեջ կանանց ավելի ցածր կարգավիճակի մասին («Հայաստանում հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների տարածվածությունը եւ պատճառները» ՄԱԲՀ, 2012 թվական, «Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնությունը. ժողովրդագրական փաստեր եւ վերլուծություն» զեկույց, ՄԱԲՀ, 2013 թվական, «Հարավային Կովկասի կորսված աղջիկները», Համաշխարհային բանկ, ՀՈԿԿ, 2014 թվական):

- Պատրիլոկալ ամուսնությունները, երբ աղջիկները տեղափոխվում են ապրելու իրենց ամուսինների ընտանիքների հետ, կարող է լինել այն պատճառներից մեկը, որով բացատրվում է որդիների համեմատությամբ դուստրերին պակաս նախապատվություն տալը:
- Հասարակության մեջ կանանց կարգավիճակի մեկ այլ ցուցիչ է իրենց վաստակի նկատմամբ վերահսկողությունը: Քաղաքաբնակ կանայք, ի տարբերություն գյուղաբնակ կանանց (կանանց համապատասխանաբար 34 եւ 11 տոկոսը), երեք անգամ ավելի մեծ հավանականությամբ որոշում կկայացնեն իրենց վաստակած գումարի առնչությամբ («Հայաստանում հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների տարածվածությունը եւ պատճառները» ՄԱԲՀ, 2012 թվական, «Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնությունը. ժողովրդագրական փաստեր եւ վերլուծություն» զեկույց, ՄԱԲՀ, 2013 թվական, «Հարավային Կովկասի կորսված աղջիկները», Համաշխարհային բանկ, ՀՈԿԿ, 2014 թվական)
- Ինչ վերաբերում է կանանց ձայնին, ապա 2012 թվականին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները ցույց են տալիս կանանց համար քաղաքական իշխանության հասանելիության ցածր մակարդակ. 638 գյուղական համայնքներում համայնքապետի պաշտոնի համար առաջադրված 1,237 թեկնածուներից ընդամենը 43-ն էր կին (կամ 3.5 տոկոսը), եւ նույնիսկ ավելի քիչ տոկոսն է (2 տոկոսից քիչ) ընտրվել այդ պաշտոնում: Համայնքների ավագանիներում կանայք կազմում են ընտրվածների 8.6 տոկոսը (Հայաստանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում. այլընտրանքային զեկույց, 2009-2012 թթ., էջ 17, ներկայացվել է ԿՆԽՎԿ կոմիտեին (CEDAWC) 2014 թվականին):
- Գյուղաբնակ կանանց սոցիալական կարգավիճակի գնահատման մեկ այլ կարեւոր ցուցիչ է գենդերային բռնության նկատմամբ կանանց ու տղամարդկանց վերաբերմունքի գնահատումը: Առավել հավանական է, որ այն կանայք, որոնք գտնվում են բարեկեցության ամենացածր քվինտիլում (20 տոկոս), ունեն կրթության շատ ցածր մակարդակ եւ գյուղական բնակավայրերից են, կընդունեն ընտանեկան բռնության տեսքով այս ենթակայությունը. գյուղաբնակ կանանց 11.8 տոկոսը եւ տղամարդկանց 28 տոկոսը որոշ դեպքերում այս ագրեսիան արդարացված են համարում:
- Տղամարդկանց նույնականացումը եւ նույնիսկ գրանցումը որպես «տնային տնտեսությունների գլխավորներ» եւ ընտանիքների ներկայացուցիչներ (օրինակ՝ հողի գրանցման դեպքում) նույնպես նպաստում են գյուղական բնակավայրերում կանանց ու տղամարդկանց անհավասար ու հիերարխիական կարգավիճակի պահպանմանը:

1 Տարիներ շարունակ ունենալով բնակչության աճի անկում՝ Հայաստանի կառավարությունն առաջարկել է արգելել հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների պրակտիկան: 2015 թվականին ներկայացվելով Խորհրդարան՝ օրինագիծը, որը մշակվել է Առողջապահության նախարարության կողմից, բացահայտորեն արգելում է հղիության՝ սեռով պայմանավորված բոլոր ընդհատումները եւ, փորձելով փակել այլ ելք գտնելու բոլոր ճանապարհները, մասնավորապես արգելում է առանց բժշկի թույլտվության ընդհատումները հղիության 12-22-րդ շաբաթների ընթացքում: Հղիության հենց այդ ժամանակահատվածում է սկսում երեւալ երեխայի սեռը: Փոփոխություններ են կատարվելու Հայաստանի Հանրապետության «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում եւ Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում: http://armenpress.am/eng/news/832472/sex-selective-abortions-to-be-forbidden-by-law-in-ar-menia.html

# 1. Ներածություն

## 1.1 Գենդերային գնահատման նախապատմությունը

Գենդերային հավասարությունը աղքատության եւ սովի վերացման բանալի է, ինչպես դա ՊԳԿ-ի կողմից ցույց է տրվել ողջ աշխարհում իրականացված հետազոտությունների միջոցով: ՊԳԿ-ն հանձնառու է իր ծրագրային միջամտությունների միջոցով նպաստել գենդերային անհավասարությունների կրճատմանը, եւ այս զեկույցը պատրաստվել է որպես կազմակերպության ջանքերի մի մաս՝ ստեղծելու ապացուցային հիմք եւ գիտելիք՝ ՊԳԿ Գենդերային հավասարության քաղաքականությանը համահունչ: Միայն գենդերային ճեղքվածքը փակելով է հնարավոր իրականություն դարձնել կայուն գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման ռազմավարությունների ողջ ներուժը:

ՊԳԿ Գենդերային հավասարության քաղաքականությունը (FAO, 2013 a) գենդերային ուղղորդումը (մեյնսթրիմինգ) եւ կանանց ուղղված գործողությունները որոշարկում է որպես երկուղի ռազմավարություն, որի նպատակն է գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման ոլորտներում գենդերային հավասարության հասնելը: Այս տեսակետից՝ քաղաքականությունը սահմանում է գենդերային ուղղորդման մի շարք նվազագույն ստանդարտներ, ըստ որոնց ՊԳԿ-ի եւ անդամ պետությունների կառավարությունների միջեւ համագործակցության ծրագրերի (որոնք ստանում են Երկրի առաջնահերթությունների ծրագրային շրջանակի [ԵԱԾՇ] տեսք) ձեւակերպման նպատակով անհրաժեշտ է կատարել տվյալ երկրի գենդերային գնահատում եւ իրականացնել գենդերային վերլուծություն տեխնիկական օժանդակության նախագծերի նախապատրաստման եւ մշակման փուլերում:

Այս գնահատման խնդիրն է գենդերային տեսանկյունից վերլուծել Հայաստանի գյուղատնտեսական եւ գյուղական զարգացման ոլորտներն ու առաջարկություններ ներկայացնել այն մասին, թե ինչպես է ապահովվում գենդերային զգայուն մոտեցում հետագա ծրագրերի մշակման ընթացքում, ինչպես նաեւ բացահայտել հնարավոր գործընկերների՝ գենդերին հավասարությանն ուղղված գործողությունների իրականացման համար:[2]

Գենդերային այս գնահատումը վեր է հանում գենդերային որոշ հիմնական անհավասարություններ, որոնք առկա տվյալների հիման վրա պետք է նկատի առնեն քաղաքականություն մշակողները եւ ծրագրերի ղեկավարները: Զեկույցը բացահայտում է հետագա հետազոտություններ իրականացնելու կարիքը բազմաթիվ ոլորտներում, ներառյալ՝ ձկնաբուծությունը, անտառտնտեսությունը, տեղական ֆերմերների համագործակցությունը եւ կանանց իրական մասնակցությունը ՀՆԱ-ի ստեղծմանը՝ մասնավորապես հաշվի առնելով որպես չվճարվող ընտանեկան ֆերմերներ նրանց ısկայածավալ ներդրումը:

Գնահատումը կօգնի Հայաստանի Հանրապետության կառավարությանը, ՊԳԿ աշխատակազմին եւ շահագրգիռ այլ կողմերի՝ առավել արդյունավետորեն կրճատելու գենդերահեն անհավասարությունները եւ առաջ մղելու գյուղացի կանանց զորացումը զարգացմանն ուղղված ծրագրային միջամտություններում՝ տրամադրելով բացատրող ընդհանուր տեղեկություններ եւ գենդերային հարցերին վերաբերող էական տեղեկույթ պարունակող բազային տվյալներ:

## 1.2 Մեթոդաբանությունը

Երկրի գենդերային գնահատման մեթոդաբանությունը ներառել է քանակական եւ որակական երկրորդային տվյալների համեմատում եւ վերլուծություն, ինչպես նաեւ փաստաթղթերի ուսումնասիրություն: Ուսումնասիրությունը հիմնված էր ընտրված այնպիսի փաստաթղթերի ուսումնասիրության վրա, որոնք վերաբերում էին ընթացիկ

2 Սա համապատասխանում է նաեւ ՊԳԿ-ի ծրագրային ցիկլի ուղղեցույցում (2012 թ.) նշված առաջարկություններին, որը կոչ է անում ծրագրի և ծրագրային հայեցակարգերի պատրաստման ընթացքում օգտագործել գենդերային վերլուծություններ: Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային գրասենյակների 2012 թ.-ին կատարած ուսումնասիրության ժամանակ նույնպես առաջարկվում է, որ նախքան որևէ նախագծի կազմումը պետք է իրականացվի գենդերային գնահատում:

ծրագրերին՝ ուղղված գյուղական շրջանների եւ գյուղատնտեսության զարգացմանը, ինչպես նաեւ այլ դոնոր գործակալությունների, միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների եւ ֆերմերների ասոցիացիաների պատրաստած մի շարք հաշվետվությունների, համառոտագրերի եւ հոդվածների ուսումնասիրության վրա: Զեկույցում լայնորեն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության տվյալները (ARMSTAT, 2015c): Ուսումնասիրվել են նաեւ ազգային գենդերային քաղաքականությանը եւ գենդերային հավասարությանը վերաբերող ազգային օրենսդրությունը եւ նորմատիվ ակտերը (տե՛ս փաստաթղթերի աղբյուրների ցանկը Հավելված 1-ում): Ընտրված համապատասխան ազգային եւ միջազգային գործընկերների հետ (ներառյալ ՊԳԿ-ի ծրագրերի իրականացնող գործընկերների, ֆերմերների ասոցիացիաների, ՀԿ-ների եւ ֆերմերների խմբերի հետ հանդիպումները) 2014 թվականին անցկացված հարցազրույցների եւ ֆոկուսային խմբերով քննարկումների միջոցով հավաքվել են լրացուցիչ առաջնային որակական տվյալներ եւ օգտագործվել՝ հարստացնելու վերլուծությունը (խորհրդակցության հրավիրվածների ցանկի համար տե՛ս Հավելված 2-ը):

## 1.3 ՊԳԿ-ն Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունը ՊԳԿ-ին անդամակցում է 1993 թ. նոյեմբերից, իսկ 2004 թ. սեպտեմբերին հիմնադրվեց ՊԳԿ ներկայացուցչության գրասենյակը Հայաստանում: ՊԳԿ-Հայաստանի Հանրապետության կառավարություն համագործակցության առանցքում են 2016-2020 թթ. Երկրի առաջնահերթությունների ծրագրային շրջանակում (ԵԱԾՇ) ներառված երեք գերակա ոլորտներ, որոնք նաեւ նպաստում են Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման աջակցության ծրագրում (ՄԱԿԶԱԾ/UNDAF) ամրագրված որոշ առաջնահերթությունների իրագործմանը (UN Armenia, 2016. UNDAF 2016-2020): Հայաստանում ԵԱԾՇ գերակա ոլորտները 2016-ից 2020 թվականների համար հետեւյալն են.

- Բնական պաշարների կայուն օգտագործում, աղետների ռիսկի նվազեցում եւ կառավարում.
- Կենդանիների առողջություն, բույսերի պաշտպանություն եւ սննդամթերքի անվտանգություն.
- Պարենային եւ սնուցման ապահովություն ու աղքատության կրճատում:

# 2. Հայաստանի Հանրապետության հակիրճ նկարագիր

## 2.1 Սոցիալ-տնտեսական նկարագիր

Հայաստանի Հանրապետությունը 29,743 քառ. կմ տարածքով լեռնային երկիր է, որը հյուսիս-արեւմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, հարավից՝ Իրանին, իսկ հարավ-արեւմուտքից եւ արեւելքից՝ Ադրբեջանին:

Ծագումով հայերը կազմում են բնակչության 98.1 տոկոսը, իսկ ազգային փոքրամասնություններն են եզդիները (1.2 տոկոս) եւ ռուսները (0.4 տոկոս): Այլ փոքրամասնությունների թվում են ասորիները, ուկրաինացիները, կովկասյան հույները, քրդերը, վրացիները եւ բելառուսները (ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները, ԱՎԾ, 2013 թվական): Հայ առաքելական եկեղեցին ամենատարածվածն է (ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները, ԱՎԾ, 2013 թվական):

Հայաստանի բնակչությունը կազմում է 3,018,854 մարդ, որտեղ դե ֆակտո բնակչության սեռերի հարաբերակցությունը կազմում է 88 տղամարդ՝ յուրաքանչյուր 100 կնոջ հաշվով:[3] Գյուղական բնակավայրերում, որտեղ ապրում է ընդհանուր բնակչության 38.7 տոկոսը, փաստացի բնակչության սեռերի հարաբերակցությունը կազմում է 93.5 տղամարդ՝ յուրաքանչյուր 100 կնոջ հաշվով (Սեռերի հարաբերակցությունը հաշվվում է բնակչության դե ֆակտո եւ ոչ թե դե յուրե թվի հիման վրա: Ավելի մանրամասն տեղեկությունների համար այցելել ՀՀ ԱՎԾ 2011 թ.): Արտագաղթի, հատկապես տղամարդկանց միգրացիայի բարձր մակարդակը հանգեցրել են բնակչության կրճատման եւ դրանով է բացատրվում սեռերի այս անհավասար հարաբերակցությունը: Ըստ գնահատականների, 1991 թվականից ի վեր 700,000-ից մինչեւ մեկ միլիոն մարդ է արտագաղթել, եւ Հայաստանի տնային տնտեսությունների շուրջ 20 տոկոսն ունի ընտանիքի արտագաղթած անդամ:[4] 1990-ական թվականներին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության ընթացքում հեռացածներից բացի՝ միգրանտների 96%-ը մեկնել է Ռուսաստան (ԱՄԿ, «Աշխատանքը եւ ընտանեկան հարաբերությունները Հայաստանում», 2010 թվական):

Ըստ գնահատականների, մեկ շնչի հաշվարկով 3,830 ԱՄՆ դոլար ՀՆԱ-ով Հայաստանը գտնվում է միջին եկամուտ ունեցող երկրների խմբի ստորին հատվածում (Համաշխարհային բանկ, Հայաստանի համառոտ նկարագրություն): Հայաստանում գյուղատնտեսությունը դեռեւս դիտարկվում է որպես աճի առաջնային խթան՝ ի հավելումն արդյունաբերության եւ ծառայությունների ճյուղերի կողմից համեստ ներդրման: 2012 թվականին գյուղատնտեսության հատվածում ավելացված արժեքը կազմել է ՀՆԱ-ի 19.1 տոկոսը, մինչդեռ եթե այն միացնենք գյուղմթերքների վերամշակման բնագավառին, այն կկազմի ՀՆԱ-ի 26 տոկոսը: 2012 թվականի դրությամբ՝ համախառն գյուղատնտեսական արտադրանքի ծավալը հասել է 764 մլրդ դրամի (որը համարժեք է 1.9 մլրդ ԱՄՆ դոլարի). մշակաբույսերի աճեցումը կազմել է այս գումարի 60 տոկոսը, իսկ անասնաբուծությունը՝ 40 տոկոսը: Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովության առումով զբաղեցնում է իր ուրույն տեղը (Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հաստատվել է ՀՀ կառավարության թիվ 442-Ն որոշմամբ/ մարտի 27, 2014):

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետեւանքով աղքատության մակարդակն աճեց ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակչության շրջանում:[5] Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի, 2014 թվականին աղքատության մակարդակը եղել է 30 տոկոս (Համաշխարհային բանկ, Հայաստանի համառոտ նկարագրություն), ինչը նշանակում է, որ գրեթե

---

3 Սեռերի հարաբերակցությունը հաշվվում է բնակչության դե ֆակտո եւ ոչ թե դե յուրե թվի հիման վրա: Ավելի մանրամասն տեղեկությունների համար այցելել ՀՀ ԱՎԾ 2011 թ.՝ http://armstat.am/file/doc/99486108.pdf

4 Մեծ թվով հայեր բնակվում են արտասահմանում՝ որպես ժամանակավոր աշխատողներ: Հավանական միգրանտների կողմից նշված պատճառներից էին «Աշխատատեղերի բացակայությունը» (40.1%), «Պատշաճ կենսամակարդակ ապահովելու համար բավականաչափ փող աշխատելու անհնարինությունը» (32.5%), «Երկրի/բնակավայրի զարգացման որեւէ հեռանկարի բացակայությունը» (7.3%), եւ «Ընտանեկան հանգամանքները (վերամիավորում, ամուսնություն, ամուսնալուծություն, եւ այլն)» (7.2%): «ՀՀ արտաքին եւ ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց», ՀՀ ԱՎԾ, ՄԱԲՀ, 2008 թվական:

5 Սկսած 2009 թվականից՝ Հայաստանում բարեկեցության չափման համար օգտագործվում է նվազագույն սպառողական զամբյուղի ցուցանիշը: Նվազագույն սպառողական զամբյուղը չափվում է Հայաստանի Տնային տնտեսությունների կենսապայմանների հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքների հիման վրա եւ ներառում է հետեւյալ բաղկացուցիչները. (ա) սպառված պարենային եւ ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից ստացված օգնությունը եւ այլ աղբյուրներից ստացված օգնությունը եւ (բ) երկարատեւ օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը: Հայաստանում աղքատության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է աղքատության բացարձակ գիծը: (Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը, ԱՎԾ, 2015 թվականhttp://www.armstat.am/fi le/ article/9._poverty_2015e_6.pdf)

յուրաքանչյուր երրորդ մարդ ապրել է այնպիսի տնային տնտեսությունում, որը գտնվել է ամսական 40,264 դրամ (կամ ամսական 96.8 ԱՄՆ դոլար) կազմող աղքատության ազգային գծից ցածր:[6] Այս անձանց թվում յուրաքանչյուր հինգերորդը (19.1 տոկոս) շատ աղքատ էր, իսկ 2.3 տոկոսը պատկանում էին ծայրահեղ աղքատների խմբին (Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը, ԱՎԾ, 2015 թվական): Մինչեւ 6 տարեկան երեք կամ ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատ լինելու հավանականությունը մոտ 1.8 անգամ ավելի մեծ է (54.9%), քան ազգային միջին ցուցանիշը (30%):

Աղքատությունը 2014 թվականին շատ չի տարբերվել ըստ քաղաքային (30.0%) եւ գյուղական (29.9%) բնակավայրերի: Միեւնույն ժամանակ, ցցող տարբերություն կա մայրաքաղաք Երեւանում (25.0%) եւ երկրի այլ քաղաքային բնակավայրերում (35.1 %) աղքատության մակարդակների միջեւ: Աղքատների եւ ծայրահեղ աղքատների մեծամասնությունը Հայաստանի մարզերում բնակվող քաղաքաբնակներ են: Այս տվյալները ցույց են տալիս, որ սեփական օգտագործման նպատակով գյուղատնտեսությունը կարեւոր դեր ունի՝ օգնելու, որ գյուղաբնակ կանայք եւ տղամարդիկ հաղթահարեն աղքատությունը:

Գյուղական համայնքներում կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունները կազմել են ընդհանուրի 27.2 տոկոսը (Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը, ԱՎԾ, 2015 թվական): Տղամարդկանց շրջանում երկարաժամկետ աշխատանքային միգրացիայի բարձր մակարդակը մեծացնում է կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների քանակը, քանի որ կանայք տնային տնտեսությունների գլխավորներ են համարվում որպես կանոն միայն այն դեպքերում, երբ տղամարդիկ բացակայում են: Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունները (ԿԳՏՏ) որոշակի չափով ավելի հակված են աղքատության մեջ հայտնվելու, քան տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունները (համապատասխանաբար՝ 31.5 տոկոս եւ 29.4 տոկոս)՝ կանանց սահմանափակ տնտեսական հնարավորությունների, սեռով պայմանավորված անհավասար վարձատրության եւ, ամենից առավել, այն պատճառով, որ ԿԳՏՏ-ները որպես կանոն մեկ ծնողով տնային տնտեսություններ են, որտեղ տնտեսապես ակտիվ եւ ընտանիք եկամուտ բերող անդամների քանակն ավելի փոքր է:

Պարզվում է, որ կանանց շրջանում աղքատության մակարդակն ավելի բարձր է, քան տղամարդկանց շրջանում (համապատասխանաբար՝ 54.7 տոկոս եւ 45.3 տոկոս), ինչը հետեւանք է այն բանի, որ կանայք տղամարդկանց համեմատությամբ ունեն ավելի սահմանափակ տնտեսական հնարավորություններ:

ՄԱԶԾ Մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ) Հայաստանի դեպքում 2014 թվականին կազմել է 0.73, եւ Հայաստանը 187 երկրների շարքում զբաղեցրել է 87-րդ հորիզոնականը (Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը, ԱՎԾ, 2015 թվական): Գենդերային անհավասարության ինդեքսի նույն տարվա ցուցանիշը կազմել է 0.318, եւ Հայաստանը 155 երկրների շարքում զբաղեցրել է 62-րդ տեղը:[7] Ըստ մեկ այլ համաշխարհային ցուցանիշի՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի Գենդերային ճեղքվածքի ինդեքսի («Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, 2015 թվական), Հայաստանը 145 երկրների շարքում գտնվում էր 105-րդ հորիզոնականում, փաստորեն, որ երկրի դիրքը 2007 թվականից ի վեր հաստատուն կերպով նվազում է («Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, 2015 թվական): Գենդերային ճեղքվածքի ինդեքսում ամենախնդրահարույցը տնտեսական, քաղաքական եւ առողջապահական հատվածներն են:

## 2.2 Քաղաքական եւ ինստիտուցիոնալ նկարագիրը

Դարեր շարունակ Օսմանյան կայսրության ու Պարսկաստանի միջև բաժանված լինելուց եւ այնուհետեւ 19-րդ դարի կեսերից Արեւելյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ լինելուց հետո Հայաստանն առաջին անգամ անկախ հանրապետություն է դարձել 1918 թվականին՝ նախքան 1920 թվականին բոլշեւիկյան իշխանության տակ հայտնվելը: Խորհրդային Միության փլուզումից հետո ժամանակակից անկախ Հայաստանի Հանրապետությունը հիմնադրվել է 1991 թվականին:

6 2014 թվականին աղքատության ընդհանուր, վերին եւ ստորին, ինչպես նաեւ ծայրահեղ աղքատության գծերը, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար գնահատվել են՝ համապատասխանաբար 40,264 դրամ (կամ 96.8 ԱՄՆ դոլար), 33,101 դրամ (կամ 79.6 ԱՄՆ դոլար) եւ 23,384 դրամ (կամ 56.2 ԱՄՆ դոլար):
7 Ինդեքսը հաշվարկվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից՝ տնտեսության, քաղաքականության, կրթության եւ առողջապահության առանցքային ոլորտներում: Ինդեքսն առավել ճշգրտորեն արտացոլում է մարդկային կապիտալի անարդյունավետ օգտագործման հիմնախնդիրը եւ ապացուցում է, որ այն երկրները, որոնք ոչ արդյունավետ ձեւով են օգտագործում իրենց աշխատուժի ռեսուրսի կեսը, ենթարկվում են մրցունակության մակարդակի նվազման ռիսկին:

Նոր հանրապետության կայացման առաջին տարիներին մեծ խոչընդոտ էր հարեւան Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի շուրջ պատերազմը: Ռուսաստանի միջնորդությամբ հաստատված հրադադարը 1994 թվականին վերջ դրեց ռազմական հակամարտությանը, որին մինչեւ այդ պահը զոհ էր գնացել մոտավորապես 30,000 մարդ, իսկ ավելի քան մեկ միլիոն մարդ տեղահանվել էր: Չնայած այդ ժամանակից սկսած տեղի ունեցող խաղաղության բանակցություններին՝ Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակը շարունակում է մնալ չկարգավորված, իսկ Հայաստանի ու Ադրբեջանի հարաբերությունները շարունակում են մնալ լարված: Հրադադարի խախտումները կտրուկ աճել են 2014 թվականից սկսած՝ դառնալով երկու կողմերում տասնյակ մարդկային զոհերի պատճառ:

Հայաստանն ունի կիսանախագահական, բազմակուսակցական քաղաքական համակարգ: Նախագահը կառավարության ղեկավարն է, որն իրականացնում է գործադիր իշխանություն, իսկ օրենսդիր իշխանությունը վստահված է թե՛ կառավարությանը, թե՛ խորհրդարանին:[8] 2012 թվականի ընտրություններից ի վեր Միապալատ խորհրդարանի (Ազգային ժողով) մեծամասնությունը կազմում են Հանրապետական կուսակցության ներկայացուցիրները:[9]

Վարչական տեսանկյունից Հայաստանի Հանրապետության տարածքը բաղկացած է տասը մարզից եւ Երեւան քաղաքից: Մարզերում պետական կառավարումն իրականացվում է Նախագահի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրով եւ այլ իրավական ակտերով:

Մարզպետները նշանակվում եւ հեռացվում են կառավարության որոշումներով, որոնք ենթակա են Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատմանը: Իշխանության շրջանակում, որը նրանց է վստահվել օրենքով, մարզպետներն իրենց համապատասխան մարզերում իրականացնում են կառավարության մարզային քաղաքականությունը՝ համակարգելով գործադիր իշխանության տեղական ճյուղերի գործունեությունը հետեւյալ ոլորտներում՝ ֆինանսներ, քաղաքաշինություն, բնակարանային ու կոմունալ ծառայություններ, տրանսպորտ ու ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն եւ հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, մշակույթ եւ սպորտ, բնության եւ շրջակա միջավայրի պահպանություն, առեւտուր, հանրային սննդամատակարարում եւ այլ ծառայություններ:[10]

Հետեւաբար, մարզպետարաններն ու մարզային պաշտոնյաները կարեւոր դեր են խաղում տեղի մակարդակում ազգային քաղաքականության ու ռազմավարության մեկնաբանման ու իրականացման գործում, այդ թվում՝ նրանց, որոնք վերաբերում են գենդերային հավասարությանն ու գյուղական շրջանների զարգացմանը:

Հայաստանն ավելի քան 40 միջազգային կազմակերպության անդամ է, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, Ասիական զարգացման բանկի, Անկախ Պետությունների Համագործակցության, Առեւտրի համաշխարհային կազմակերպության, Համաշխարհային մաքսային կազմակերպության, Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության եւ Ֆրանկոֆոնիայի:

Արեւելքի ու արեւմուտքի միջեւ միջազգային հարաբերություններում զգուշավոր հավասարակշռություն պահպանելով՝ Հայաստանը անդամակցում է եւ՛ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), որը ռազմական դաշինք է Ռուսաստանի եւ նախկին խորհրդային պետությունների միջեւ, եւ՛ մասնակցում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: Երկիրը մաս է կազմում Եվրոպական միության Եվրոպական հարեւանության քաղաքականությանը (ԵՀՔ) եւ բանակցում էր Եվրոպական միության ասոցացված անդամ դառնալու համար: 2015 թվականի հունվարին Հայաստանը պաշտոնապես միացել է մեկ այլ տնտեսական բլոկի՝ Ռուսաստանի գլխավորությամբ գործող Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ):

Հայաստանի Հանրապետությունը *«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիային* միացել է 1994 թվականին:

8 2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի է ունեցել սահմանադրական հանրաքվե: Սահմանադրության մեջ առաջարկվող լրացումների ու փոփոխությունների արդյունքում երկիրը կիսանախագահական համակարգից դառնալու էր խորհրդարանական հանրապետություն, նախատեսված է, որ փոփոխություններն ուժի մեջ են մտնելու 2017-18 թվականների ընտրական փուլի ընթացքում:
9 http://www.parliament.am/?lang=eng
10 http://gov.am/en/regions

**Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերը եւ քաղաքական հանձնառությունները, որոնք ուղղված են գենդերային անհավասարությունների կրճատմանը**

| Տարի | |
|---|---|
| 1993 | Անդամակցում Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին |
| 1994 | Անդամակցում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիային |
| 1994 | Հավասար վարձատրության մասին կոնվենցիայի վավերացում |
| 1998 | «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» թիվ 242 որոշում |
| 1998 | «Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 406 որոշում |
| 2002 | Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի վավերացում |
| 2003 | Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիայի եւ հարակից արձանագրությունների վավերացում |
| 2004 | Կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի ընդունում |
| 2006 | Անդամակցում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությանը |
| 2008 | Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թթ. ծրագիր |
| 2010 | ՀՀ Գենդերային քաղաքականության հայեցակարգ |
| 2011 | «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի մասին» թիվ 19 արձանագրային որոշում |
| 2013 | Հայաստանի Հանրապետության օրենք «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին» |
| 2015 | Սահմանադրության փոփոխություններ |
| 2015 | «Պեկին+20»-ի շուրջ 2015 թվականի սեպտեմբերին Գենդերային հավասարության եւ կանանց հզորացման թեմայով համաշխարհային առաջնորդների հանդիպման ժամանակ ստանձնած հանձնառություններ |
| 2015 | Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառությունները Կայուն զարգացման նպատակների ներքո |

Գենդերային հավասարության ապահովման խորհրդային մոտեցումը խոր ազդեցություն է ունեցել Հայաստանում կանանց իրավունքների վրա: Խորհրդային Միությունը ուներ պաշտոնական քաղաքականություն, եւ խորհրդային իշխանության ժամանակ խրախուսվում էր կանանց մասնակցությունը երկրի սոցիալական ու քաղաքական կյանքին: Չնայած կանանց էմանսիպացման պատճառներից մեկը թույլ տնտեսության մեջ որակյալ աշխատուժի ավելացումն էր, դրական խտրականության եւ աջակցող գործողությունների միջոցով այս քաղաքականությունները օրենսդրության եւ կանանց սոցիալական կարգավիճակի բարելավման մեջ դրական փոփոխությունների են հանգեցրել: Այսուամենայնիվ, իրավական պաշտպանությունը անպայմանորեն փոփոխություններ չի առաջացրել խորքային վերաբերմունքի մեջ: Նոր խորհրդային կինը բարձր դեր ուներ հասարակության մեջ, սակայն գենդերային դերերը տանը մնացել էին անփոփոխ («Գենդերային իրավիճակի գնահատում», ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան, Երեւան, 2010 թվական):

Անկախությունից ի վեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ազգային օրենսդրության մեջ կայուն կերպով ներառել է գենդերային հավասարության մասին միջազգային *նորմատիվային-իրավական բազան* եւ ընդունվել են է մի շարք օրենքներ ու քաղաքականություններ՝ գենդերային անհավասարությունները հաղթահարելու նպատակով: 1998 թվականին Հայաստանի կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» թիվ 242 որոշումը եւ «Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 406 որոշումը: 2004 թվականի ապրիլին ՀՀ կառավարությունն ընդունել է կանանց վիճակի բարելավման առաջին Ազգային

գործողությունների պլանը եւ այդ ժամանակից սկսած ավելացրել է ջանքերը երկրում գենդերային անհավասարությունների կրճատման գործում ներդրում ունենալու ուղղությամբ:

Հիմնական փաստաթուղթը, որն արտացոլում է գենդերային հավասարության քաղաքականության նկատմամբ Հայաստանի ընթացիկ պարտավորությունը, ՀՀ Գենդերային քաղաքականության հայեցակարգն է, որին Հայաստանի կառավարությունը հավանություն է տվել 2010 թվականի փետրվարին (ՀՀ Գենդերային քաղաքականության հայեցակարգ, 2010 թվական): Գենդերային քաղաքականության հայեցակարգի նպատակը սոցիալ-քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում եւ կառավարության բոլոր մակարդակների քաղաքականություններում գենդերային մեյնսթրիմինգի համակարգումն է՝ որպես հասարակության մեջ կայուն ժողովրդավարական զարգացում ապահովելու, ժողովրդավարական, բաց ու արդար քաղաքացիական հասարակությանը համախմբելու, պետության մեջ օրենքի իշխանությունն ամրապնդելու գործիք:

2011 թվականի մայիսի 20-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի մասին» թիվ 19 արձանագրային որոշումը (ՀՀ կառավարություն, 2011): Գործողությունների ծրագիրը համահունչ էր ՀՀ Գենդերային քաղաքականության հայեցակարգի հիմնական ուղղությունների հետ եւ սահմանել էր, ի թիվս այլ խնդիրների, հետեւյալ նպատակը՝ «գյուղատնտեսական ու գյուղական ենթակառուցվածքների բարելավում եւ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հնարավորությունների ընդլայնում» (ՀՀ կառավարություն, 2011):

Գենդերային քաղաքականության իրականացման եւ չհավասարակշռված իրավունքների ու հնարավորությունների խնդիրներին անդրադառնալու համար մեծ նշանակություն ունի «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը[11], որն ընդունվել է 2013 թվականին: Այն կարգավորում է կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովմանն առնչվող խնդիրները քաղաքականության, հանրային կառավարման, աշխատանքի ու զբաղվածության, ձեռներեցության, առողջապահության ու կրթության բնագավառներում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի կողմից 2010 թվականին սահմանված առաջարկություններին55 համահունչ՝ 2015 թվականի դեկտեմբերին Սահմանադրության մեջ կատարված լրացումներն ու փոփոխությունները ներառել են կարեւոր հոդվածներ եւ դրույթներ, ինչպիսիք են՝ «Օրենքի առջեւ ընդհանուր հավասարությունը» (Հոդված 28), «Խտրականության արգելքը» (Հոդված 29) եւ «Կանանց եւ տղամարդկանց իրավահավասարությունը» (Հոդված 30):[12]

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի առաջարկություններում (2009, 2016) վեր են հանվել գյուղական բնակավայրերում կանանց նկատմամբ խտրականության վատթարագույն դեպքերը, եւ կոչ է արվել կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ գենդերային կարծրատիպերը եւ գյուղական բնակավայրերում կանանց սոցիալապես ոչ բացահայտ ու ընդունված ենթակայությունը նվազեցնելու, ինչպես նաեւ գյուղական բնակավայրերի կանանց ու աղջիկների համար կրթության, առողջապահության հասանելիությունն ու տնտեսական հնարավորություններն ընդլայնելու ուղղությամբ: Գյուղաբնակ կանանց իրավունքների վերաբերյալ 35-րդ ընդհանուր առաջարկությունը, որը 2016 թվականի մարտի 4-ին հավանության է արժանացել Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման կոմիտեի կողմից (CEDAW, 2016), կարեւոր ուղեցույց է գյուղական բնակավայրերում գենդերային հավասարությանը հետամուտ լինելու գործում Հայաստանի Հանրապետության կառավարությանը սատարելու համար:

«Պեկին +20»-ի եւ Կայուն զարգացման նոր նպատակների սահմանման համատեքստում Հայաստանի կառավարությունը 2015 թվականի սեպտեմբերին Գենդերային հավասարության ու կանանց հնարավորությունների ընդլայնման թեմայով համաշխարհային առաջնորդների հանդիպմանը պարտավորություն է ստանձնել ապահովել «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հնարավորությունների մասին» ՀՀ օրենքի արդյունավետ կիրարկումը եւ ստորագրել

11 Հայերեն տարբերակը՝ http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4761
12 Լրացումներ ու փոփոխություններ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, 2015 թ. դեկտեմբեր, հայերեն տարբերակ՝ http://www.president.am/hy/constitution-2015

Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» կոնվենցիան:

ՀՀ գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը գյուղատնտեսության ոլորտի եւ գյուղական բնակավայրերի զարգացման հիմնական ընթացիկ շրջանակն է եւ սահմանում է երկրի ագրոպարենային ոլորտի զարգացման հետեւյալ հիմնական առաջնահերթությունները (ՀՀ կառավարություն, 2010-2020 թթ Գյուղատնտեսության կայունզարգացման ռազմավարություն).

- Գյուղատնտեսության եւ ագրոպարենային արդյունաբերության մեջ նյութատեխնիկական ճգնաժամի հետեւանքների հաղթահարում, ինտեգրացիոն կապերի ամրապնդում,
- Գուղատնտեսական միջոլորտային համագործակցության զարգացում՝ ագրարային ոլորտում գյուղացիական տնտեսությունների կառավարումն ապահովելու նպատակով,
- Գյուղատնտեսական եւ ագրովերամշակման ենթարկված արտադրանքի վաճառքի բարելավում եւ արտահանման ծավալների ավելացում,
- Գյուղատնտեսական մրցունակության բարձրացում եւ «նոու-հաու» տեխնոլոգիաների խթանում,
- Հողային, ջրային, աշխատուժի եւ մտավոր ռեսուրսների արդյունավետ օգտագործում՝ գյուղատնտեսական ոլորտի արտադրական ներուժը բարելավելու համար,
- Պարենային ապահովության համակարգի զարգացում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան,
- Գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության ընդլայնում եւ գյուղական բնակչության գյուղացիական տնտեսությունից ստացվող եկամտի բարելավում,
- Գյուղական բնակավայրերում համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- Գյուղատնտեսական աջակցության ծառայությունների հզորացում եւ դրանց հասանելիության բարելավում,
- Բնական ու շրջակա միջավայրի լանդշաֆտի պահպանություն, ագրոտուրիզմի եւ օրգանական գյուղատնտեսության զարգացում:

2014 թվականին, հիմնվելով Հայաստանի հանրապետության 2014-2025 թթ Հեռանկարային զարգացման ռազմավարության ծրագրի վրա, մշակվել է Գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների 2016-2025 թվականների կայուն զարգացման նոր ռազմավարությունը: Ռազմավարության նախնական տարբերակը անցել է գենդերային ուղղորդում եւ սույն զեկույցն ավարտելու ժամանակ այն ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը:

Անհրաժեշտ է զգալիորեն բարելավել գյուղատնտեսության ոլորտի գենդերային վիճակագրությունը: Նույնիսկ Հայաստանի համակցված երրորդ եւ չորրորդ պարբերական զեկույցների իր եզրափակիչ դիտարկումներում(Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ) Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (ԿՆԽՎԿ) նշել է, որ *«կանանց խոցելի խմբերի, հատկապես գյուղաբնակ կանանց վերաբերյալ տեղեկատվության եւ վիճակագրության բացակայությունը, … որոնք հաճախ տառապում են խտրականության բազմաթիվ ձեւերից, հատկապեսնրանցից, որոնք վերաբերում են զբաղվածության, առողջապահության, կրթության եւ սոցիալական նպաստների հասանելիությանը»*: ՄԱԿ-ի գործակալությունները, ՄԱԿ-ի հիմնադրամները, Համաշխարհային բանկը, ԵՄ-ն եւ ՏՀԶԿ-ն, *ի թիվս այլ կառույցների*, հանդես են եկել «գենդերային տվյալների հեղափոխության» ծանրակշիռ հորդորով՝ (Տե՛ս, օրինակ՝ Քեթրին Բրենդոն, «Գործակցություն՝ հանուն գենդերային տվյալների հեղափոխության», ՄԱԿ-ի Հիմնադրամի «Գլոբալ կապեր» բլոգ, դեկտեմբերի

15, 2004 թ.: «Պեկինի գործողությունների պլատֆորմի (+20) եւ հետ-2015 զարգացման օրակարգում գենդերային հավասարության հասնելու եւ կանանց հնարավորությունների ընդլայնման հնարավորությունների գնահատում», Ուսումնասիրություն, Բրյուսել, Եվրոպական խորհրդարան: Ներքին քաղաքականությունների ընդհանուր տնօրինություն, Քաղաքականությունների դեպարտամենտ (Փաստաթուղթ PE 519.191), 2015 թ., էջ 30) համաշխարհային, տարածաշրջանային եւ ազգային մակարդակներում: Պարզ է, որ գենդերային տվյալների հեղափոխությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բարեփոխումների, այդ թվում՝ Հայաստանում գյուղատնտեսության եւ պարենային ապահովության ոլորտներում բարեփոխումների առաջընթացին հետեւելու եւ փաստերի վրա հիմնված հաջող իրականացման նախապայմաններից մեկը, եթե կամ երբ դրանք ուղղված են գենդերային հավասարության հաստատմանը:

## 2.3 Ժողովրդագրական պատկերը

### 2.3.1 Սեռերի հարաբերակցություն, կյանքի սպասվող տեւողություն եւ առողջություն

Թեեւ առողջության վերաբերյալ վիճակագրական տվյալներն տարաբաժանված են ըստ սեռի, քչերն են տարաբաժանված ըստ բնակության վայրի (քաղաքային եւ գյուղական բնակավայր):

Հայաստանի բնակչությունը կազմում է 3,018,854 մարդ, որտեղ դե ֆակտո բնակչության սեռերի հարաբերակցությունը կազմում է 88 տղամարդ՝ յուրաքանչյուր 100 կնոջ հաշվով:[13] Գյուղական բնակավայրերում, որտեղ ապրում է ընդհանուր բնակչության 38.7 տոկոսը, փաստացի բնակչության սեռերի հարաբերակցությունը կազմում է 93.5 տղամարդ՝ յուրաքանչյուր 100 կնոջ հաշվով:[14] Արտագաղթի, հատկապես տղամարդկանց միգրացիայի բարձր մակարդակը հանգեցրել են բնակչության կրճատման եւ դրանով է բացատրվում սեռերի այս անհավասար հարաբերակցությունը:

Այդուհանդերձ, նորածինների սեռերի հարաբերակցությունը տարբեր է՝ 1.13 նորածին տղաների հարաբերակցությունը յուրաքանչյուր աղջիկ երեխայի հաշվով, 27.5 հղիության արհեստական ընդհատում՝ յուրաքանչյուր 100 կենդանածնության եւ մեռելածնության հաշվով:[15] Սեռերի նման անհավասար հարաբերակցության պատճառը հղիության՝ սեռով պայմանավորված լայնատարած ընդհատումն է, երբ տղա երեխաներին ավելի մեծ նախապատվություն է տրվում, քան աղջիկներին («Հայաստանում հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների տարածվածությունը եւ պատճառները», ՄԱԲՀ, 2012 թվական, «Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնությունը. ժողովրդագրական փաստեր եւ վերլուծություն» զեկույց, ՄԱԲՀ, 2013 թվական, «Հարավային Կովկասի կորսված աղջիկները», Համաշխարհային բանկ, ՅՈՒՆԿ, 2014 թվական:): Սույն զեկույցն ավարտուն տեսքի բերելու ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ազգային ժողովին է ներկայացրել օրինագծերի փաթեթ՝ փոփոխություններ կատարելու «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում, ինչպես նաեւ փոփոխություններ ու լրացումներ կատարելու «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում, որով առաջարկվում է օրենքով արգելել հղության՝ սեռով պայմանավորված ընդհատումները:

Կանանց կյանքի սպասվող տեւողությունը ծննդյան պահից ավելի բարձր է, քան տղամարդկանց դեպքում. 78 տարեկան՝ 72-ի համեմատ: Ըստ ԱՄՆ ՄԶԳ-ի կատարած «Գենդերային իրավիճակի գնահատման» («Գենդերային իրավիճակի գնահատում», ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան, 2010 թ., էջ 19 ), «Հայաստանում առնականության մշակութային սահմանումները սերտորեն կապված են տղամարդկանց՝ ռիսկի դիմելու եւ անառողջ

13 Սեռերի հարաբերակցությունը հաշվվում է բնակչության դե ֆակտո եւ ոչ թե դե յուրե թվի հիման վրա: Ավելի մանրամասն տեղեկությունների համար այցելել ՀՀ ԱՎԾ 2011 թ.՝ http://armstat.am/file/doc/99486108.pdf
14 Նույն տեղում:
15 Տարիներ շարունակ ունենալով բնակչության աճի անկում՝ Հայաստանի կառավարությունն առաջարկել է արգելել հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների պրակտիկան:
2015 թվականին ներկայացվելով Խորհրդարան՝ օրինագիծը, որը մշակվել է Առողջապահության նախարարության կողմից, բացահայտորեն արգելում է հղիության՝ սեռով պայմանավորված բոլոր ընդհատումները եւ, փորձելով փակել այլ ելք գտնելու բոլոր ճանապարհները, մասնավորապես արգելում է առանց բժշկի թույլտվության ընդհատումները հղիության 12-22-րդ շաբաթների ընթացքում: Հղիության հենց այդ ժամանակահատվածում է սկսում երեւալ երեխայի սեռը: Փոփոխություններ են կատարվելու Հայաստանի Հանրապետության «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում եւ Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում: http://armenpress.am/eng/news/832472/sex-selective-abortions-to-be-forbidden-by-law-in-armenia.html

վարքի ընտրության հետ, ինչպիսիք են՝ ալկոհոլի ու թմրամիջոցների չարաշահումը, առանց պաշտպանվելու սեռական հարաբերությունները եւ նույնիսկ ամրագոտի կապելու դժկամությունը»: Կյանքի սպասվող տեւողության տարբերությունն արտացոլվում է նաեւ տղամարդկանց համեմատությամբ կենսաթոշակ ստացող կանանց անհամաչափ թվի մեջ:

Ընդհանուր առմամբ, թե՛ քաղաքային եւ թե՛ գյուղական բնակավայրերում կանայք ավելի հաճախ են իրենց առողջությունը նկարագրում որպես լավ կամ շատ լավ՝ (49.8 տոկոս՝ ի տարբերություն 42.3 տոկոսի). քաղաքաբնակ կանանց 50.9 տոկոսն իրենց առողջությունը նկարագրում են որպես լավ կամ շատ լավ՝ ի տարբերություն գյուղաբնակ կանանց 48.1 տոկոսի («Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտություն», ՀՀ ԱՎԾ, 2013 թվական:):

Գյուղական բնակավայրերում առողջապահական հաստատությունների կրճատումը եւ շարժունակության սահմանափակ հասանելիությունը առողջապահական ծառայություններից օգտվելու համար գյուղաբնակ կանանց կախվածության մեջ են գցում տղամարդկանցից:

## 2.3.2 Միգրացիա

Համադրելով բնակչության de facto եւ ոչ թե de jure թվին, երբ երկրում սեռերի հարաբերակցությունը կազմում է 88 տղամարդ յուրաքանչյուր 100 կնոջ հաշվով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 93.5 յուրաքանչյուր 100 կնոջ հաշվով՝ ակնհայտ է դառնում, որ գերակշռողը տղամարդկանց միգրացիան է: Ըստ գնահատականների, 1991 թվականից ի վեր 700,000-ից մինչեւ մեկ միլիոն մարդ է արտագաղթել, եւ Հայաստանի տնային տնտեսությունների շուրջ 20 տոկոսն ունի ընտանիքի արտագաղթած անդամ:<?> 1990-ական թվականներին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության ընթացքում հեռացածներից բացի՝ միգրանտների 96%-ը մեկնել է Ռուսաստան (ԱՄԿ, «Աշխատանքը եւ ընտանեկան հարաբերությունները Հայաստանում», 2010 թվական):

Արտագաղթողների 78 տոկոսը տղամարդիկ են, եւ միայն 22 տոկոսն են կանայք: Արտագաղթողների գերակշռող մեծամասնությունը (91.7 տոկոս) 15-59 տարեկան են: Տղամարդկանց շրջանում այդ տարիքային խմբի համամասնությունը կազմում է 93.9 տոկոս, իսկ կանանց շրջանում՝ 83.5 տոկոս: Ամուսինների արտագաղթելուց հետո ծագման համայնքներում մնացող կանայք կարող են փոխել իրենց կարգավիճակը: Օրինակ՝ կանայք կարող են որոշում կայացնելու ավելի շատ իրավասություն ստանալ, օրինակ՝ երեխաների կրթության կամ առողջության համար ընտանեկան ռեսուրսների հատկացման առումով, քանի որ նրանք դառնում են տնային տնտեսության դե ֆակտո գլխավորը: Միեւնույն ժամանակ կանայք ավելի խոցելի են դառնում աղքատության նկատմամբ, երբ նրանց ամուսինները փող չեն ուղարկում: Նույն կերպ տարեց մարդիկ, որոնց մեծամասնությունը կանայք են, կարող են խոցելի դառնալ աղքատության նկատմամբ, երբ նրանց երեխաները հեռանում են իրենց ծագման համայնքից եւ տնտեսական աջակցություն չեն ցուցաբերում: Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք հակված են իրենց եկամտի ավելի մեծ բաժինն ուղարկել տուն, հավանաբար ծնողներին աջակցելու հետ կապված գենդերային ակնկալիքների պատճառով (Մարդկային զարգացման զեկույց, «Խոչընդոտների հաղթահարում. մարդկանց տեղաշարժ եւ զարգացում», ՄԱԶԾ, 2009 թվական): Այնուամենայնիվ, գումարի բացարձակ չափն ավելի փոքր է, քանի որ կանայք, որպես կանոն, ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ՝ ավելի քիչ ու ավելի վատ տնտեսական հնարավորությունների հետեւանքով, որ ունեն կանայք՝ տղամարդկանց համեմատությամբ:

16 Մեծ թվով հայեր բնակվում են արտասահմանում՝ որպես ժամանակավոր աշխատողներ: Հավանական միգրանտների կողմից նշված պատճառներից էին «Աշխատատեղերի բացակայությունը» (40.1%), «Պատշաճ կենսամակարդակ ապահովելու համար բավականաչափ փող աշխատելու անհնարինությունը» (32.5%), «Երկրի/բնակավայրի զարգացման որեւէ հեռանկարի բացակայությունը» (7.3%), եւ «Ընտանեկան հանգամանքները (վերամիավորում, ամուսնություն, ամուսնալուծություն, եւ այլն)» (7.2%): «ՀՀ արտաքին եւ ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց», ՀՀ ԱՎԾ, ՄԱԲՀ, 2008 թվական:

# 3. Գենդերային իրավիճակը եւ գյուղական տնտեսությունը

## 3.1 Կրթություն

Կրթության հասանելիության եւ կրթություն ստանալու առումով Հայաստանում արձանագրված է հավասարության համեմատաբար բարձր մակարդակ, ինչը երեւում է Գենդերային ճեղքվածքի ինդեքսի տվյալներում:

Աղյուսակ 4. Կրթության համակարգում ընդգրկվածությունը, 2013/14 թթ. ուսումնական տարի

| Ընդգրկվածություն, 2013/14 թթ. ուսումնական տարի | Աղջիկներ, տոկոս | Տղաներ, տոկոս |
|---|---|---|
| Նախադպրոցական հաստատություններում (0-5 տարեկան) | 48.5 | 51.5 |
| Հանրակրթական հաստատություններում (6-17 տարեկան) | 47.9 | 52.1 |
| Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն | 24.1 | 75.9 |
| Միջին մասնագիտական կրթություն | 53.3 | 46.7 |
| Բարձրագույն կրթություն | 52.4 | 47.6 |

Աղբյուրը. «Կանայք եւ տղամարդիկ Հայաստանում», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2014 թվական, էջ 72:

2013/14 թթ. ուստարվա ընդգրկվածության ցուցանիշները (Աղյուսակ 4) ցույց են տալիս երեխաների շրջանում աղջիկների ավելի ցածր համամասնություն, սակայն այս տարբերությունը հակառակ տեսքն է ստանում միջին եւ բարձրագույն կրթության ոլորտում ընդգրկվածության ցուցանիշներում: Հնարավոր է, որ այս փոփոխությունը կապված լինի այն բանի հետ, որ նախնական մասնագիտական հաստատություններում կա զգալի անհամամասնություն, որտեղ աղջիկների ընդգրկվածությունը կազմում է միայն 24%՝ արտացոլելով թե՛ավանդական գենդերային տարբերությունները մասնագիտացած առեւտրի եւ տեխնիկական ուղղվածության զբաղվածության ոլորտներում, թե՛ ավելի բարձր կրթական աստիճանի ձգտելու փոխարեն այս ոլորտներն ընտրող տղաների թիվը:

Չնայած հետբուհական եւ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած լինելու հավանականությունն ավելի բարձր է կանանց շրջանում, հավանականությունը, որ վերջիվերջո նրանք կստանան գիտական աստիճան, փոքր է («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ: Երեւան. ԱՎԾ, 2015 թվական), իսկ դոկտորի աստիճան ունեցողների շրջանում կանայք կազմում են ընդամենը 28 տոկոս («Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, 2015 թվական): Համալսարանական մակարդակում գոյություն ունի նաեւ հորիզոնական սեգրեգացիա: Ագրոպարենային ոլորտի պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում արական սեռի եւ իգական սեռի ուսանողների համամասնությունը կազմում է համապատասխանաբար 70/30 տոկոս, իսկ ԳՏՃՄ ոլորտների (գիտություն, տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն եւ մաթեմատիկա) շրջանավարտների միայն 38 տոկոսն են կազմում կանայք («Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, 2015 թվական):

Մեքենաշինության եւ տեխնիկայի կարծրատիպային ասոցացումը տղամարդկանց հետ իր ազդեցությունը կունենա կյանքի հետագա փուլերում. գյուղատնտեսության մեջ մեքենաներն ու տեխնիկան ավելի քիչ հասանելի կլինեն կանանց համար: Սա ուղղակիորեն նվազեցնում է կանանց տնտեսական առաջխաղացումը գյուղատնտեսության ոլորտում եւ դանդաղեցնում է գյուղատնտեսության արդիականացումն ու գյուղական բնակավայրերի զարգացումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսության ոլորտում աշխատողների 56 տոկոսը կանայք են, 44 տոկոսը՝ տղամարդիկ:

## 3.2 Ֆորմալ եւ ոչ ֆորմալ աշխատանքի շուկաները Հայաստանի Հանրապետության գյուղական շրջաններում

### 3.2.1 Աշխատանքի շուկա[17]

Ակտիվ կանանց մասնաբաժինը աշխատուժի մեջ ավելին է, քան տղամարդկանց մասնաբաժինը: Սակայն կանանց միայն 55.2 տոկոսն է համարվում տնտեսապես ակտիվ, մինչդեռ տղամարդկանց շրջանում նույն ցուցանիշը կազմում է 73.2 տոկոս: Կանայք Հայաստանում կազմում են աշխատողների 48 տոկոսը, իսկ տղամարդիկ՝ 52 տոկոսը: Միեւնույն ժամանակ կանայք կազմում են գործազուրկ բնակչության 54 տոկոսը եւ Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների 72 տոկոսը, մինչդեռ աշխատանքային միգրացիան տղամարդկանց զբաղվածության կառուցվածքում նշանակալի տեղ է զբաղեցնում («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):

Թվում է, թե աշխատանքը կորցնելուց հետո զբաղվածություն գտնելու հարցում կանայք ավելի շատ են հանդիպում դժվարությունների:[18] Երեք ամսից պակաս ժամանակահատվածում այլ աշխատանք գտածների 45 տոկոսը եղել են կանայք, իսկ ավելի քան չորս տարի ժամանակ անց աշխատանք գտածների 64 տոկոսն են կազմել կանայք («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական, էջ 128):

Զբաղվածություն ունեցողների մոտավորապես 34.8 տոկոսը (Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, 2015 թվական, էջ 61) ներգրավված է գյուղատնտեսության մեջ, որոնցից մոտ 56 տոկոսը կանայք են: Գյուղատնտեսության ոլորտում գերիշխող է եղել անասնաբուծությունը՝ ապահովելով գյուղատնտեսական աշխատուժի զբաղվածության 75 տոկոսը եւ օգտագործելով գյուղատնտեսական հողատարածքների մոտ 80 տոկոսը (ՄԱԶԾ, Գյուղատնտեսության համեմատական վերլուծություն Հարավային Կովկասում, 2013 թվական): Տղամարդկանց զբաղվածության մեջ գյուղատնտեսության բաժինը կազմում է մոտավորապես 30 տոկոս, իսկ կանանց շրջանում այն կազմում է ավելի քան 40 տոկոս, ինչը գյուղատնտեսական զարգացման մեջ կանանց դարձնում է ավելի կարեւոր մասնակիցներ:

Գյուղատնտեսության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների շրջանում կանանց մասնաբաժինը կազմում է 82.1 տոկոս՝ ի հակադրություն ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող տղամարդկանց, որոնք կազմում են 60.8 տոկոս (ՄԱԶԾ, Գյուղատնտեսության համեմատական վերլուծություն Հարավային Կովկասում, 2013 թվական): Եթե դիտարկում ենք միայն ոչ ֆորմալ զբաղվածությունը, այն դեպքում, երբ տղամարդկանց բաժին է ընկնում գործատուների ավելի քան 80 տոկոսը, կանայք ոչ ֆորմալ զբաղվածության հատվածում կազմում են այսպես կոչված «այլ»-ի 83 տոկոսը («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», 2015 թվական): Սա կարող է կապված լինել ընտանեկան հողագործության ոլորտում կանանց՝ որպես չվճարվող ընտանեկան աշխատողների չափից ավելի շատ ներկայացվածության հետ, քանի որ այն լայնորեն արձանագրված է Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում: Գյուղատնտեսության մեջ այդ «ոչ ֆորմալ կերպով» աշխատողների 56 տոկոսը կանայք են («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», 2015 թվական):

Գյուղական բնակավայրերի կանանց ընդհանուր մասնագիտական որակավորումը ցածր է՝ համեմատած քաղաքներում բնակվող կանանց մասնագիտական որակավորման հետ: Անասնաբույծներն ու գյուղատնտեսները հիմնականում տղամարդիկ են: Գյուղատնտեսական ոլորտից բացի գյուղական բնակավայրերի կանայք նաեւ աշխատում են կրթական եւ առողջապահական հաստատություններում, հիմնականում միջին օղակի պաշտոններում, սակայն ցածր վճարվող հատվածներում («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», 2015 թվական):

17 Աշխատանքի շուկայի՝ այստեղ ներկայացված վերլուծությունը հիմնականում ընդգրկում է գյուղատնտեսությունն ու անասնապահությունը: Լրացուցիչ հետազոտություններ են անհրաժեշտ ձկնաբուծության ու անտառային տնտեսության ոլորտում կանանց ու տղամարդկանց իրավիճակը գնահատելու համար:

18 Ինչ վերաբերում է տնտեսական ոլորտում գենդերային անհավասարության ցուցիչներին (զբաղվածության մակարդակը տղամարդկանց եւ կանանց համար, տղամարդկանց եւ կանանց վարձատրությունը հավասար աշխատանքի համար, մասնագետների եւ տեխնիկական անձնակազմի շրջանում տղամարդկանց եւ կանանց համամասնությունը), Հայաստանը գտնվում է 79-րդ տեղում (Գենդերային ճեղքվածքի մասին համաշխարհային զեկույց, 2015 թվական http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM):

Աշխատանքի շուկայի ուղղահայաց (կարիերայի հնարավորությունների անհավասար մատչելիություն) եւ հորիզոնական (աշխատանքի եւ զբաղվածության ոլորտներում) սեգրեգացիան, որը հանգեցնում է վարձատրության՝ սեռով պայմանավորված զգալի անհավասարության, ակնհայտ է Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում: Վարկերի, սեփականության, այդ թվում՝ հողի եւ ձեռնարկատիրության պակաս հասանելիությունը կանանց համար, ինչպես նաեւ մեքենաասարքավորումների եւ տեխնոլոգիաների կարծրատիպային ասոցացումը տղամարդկանց հետ, տալիս են գյուղական բնակավայրերում եւ գյուղատնտեսության մեջ վարձատրության գենդերային ճեղքվածքի, տղամարդկանց համեմատ՝ կանանց ավելի քիչ հնարավորությունների, կանանց շրջանում ավելի բարձր տնտեսական կախվածության աստիճանների բացատրությունը:[19]

Ըստ 2014 թ. տվյալների՝ կանանց միջին վարձատրությունը կազմել է տղամարդկանց վարձատրության 65.9 տոկոսը (ARMSTAT 2015c): Թեեւ եւ՛ տղամարդիկ, եւ՛ կանայք ոչ ֆորմալ հատվածում վաստակել են ավելի քիչ, սակայն կանանց միջին վարձատրությունը կազմել է տղամարդկանց վարձատրության 47 տոկոսը (ԱՎԾ (2010 թ.), «Ոչ ֆորմալ հատվածը եւ ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում», 2015 թվական):

Թեեւ գյուղատնտեսության, ձկնաբուծության եւ բուսաբուծության ոլորտներում վարձատրության տարբերությունը այնպիսին է, որ տղամարդկանց վաստակած յուրաքանչյուր ԱՄՆ դոլարի փոխարեն կանայք ստանում են 90 ցենտ («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», 2015 թվական), սա չի ներառում բոլոր այն կանանց, ովքեր գյուղատնտեսության, հատկապես ընտանեկան հողագործության ոլորտում կատարում են չվճարվող աշխատանքներ: Այդ կանանցից շատերը կարող է գրանցված լինեն «ինքնազբաղված բնակչություն» դասակարգման «Այլ» ենթակարգի տակ (ARMSTAT): Նրանք կարող են նաեւ «տնային տնտեսուհիներ» դասակարգման տակ գրանցված լինել որպես «ոչ ակտիվ բնակչություն», որոնք կազմում են Հայաստանի աշխատանքային տարիքի կանանց 21 տոկոսը (ARMSTAT): Այս դասակարգման տակ կան 41 անգամ ավելի շատ կանայք, քան տղամարդիկ (ARMSTAT):

Ինչ վերաբերում է անասնաբուժությանը, ապա այս ոլորտում ներգրավված կանանց թիվը բավականին ցածր է:[20] Հատկապես գյուղական բնակավայրերում կին անասնաբույժներ գրեթե չկան, թեեւ անասնաբուժական դասընթացներում ընդգրկված կանայք կան: Կան տարբեր պատճառներ առ այն, թե ինչու չեն անասնաբուժական բժշկագիտության կին ուսանողները դառնում անասնաբույժներ: Ոմանք որոշում են ամուսնանալ եւ չաշխատել («Կրթության մատչելիության գենդերային ասպեկտները», (փորձնական ուսումնասիրություն), «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ, ՕՔՍՖԱՄ, 2014 թվական): Ուրիշները տեղափոխվում են Երեւան կամ այլ քաղաքներ՝ լաբորատորիաներում աշխատանք գտնելու նպատակով: Անասնաբուժական ոլորտում կանանց համար աշխատելու գլխավոր խոչընդոտներից մեկն անկանոն աշխատանքային ժամերն են, այդ թվում՝ երեկոյան կանչերը: Ամուսինները նախընտրում են, որպեսզի իրենց կանայք երեկոյան կամ գիշերային ժամերին չաշխատեն: Կանանց համար նաեւ ավելի սահմանափակ է տրանսպորտի հասանելիությունը: Գյուղական բնակավայրերի կանայք հազվադեպ են մեքենա վարում եւ տրանսպորտի հարցում կախված են իրենց ամուսիններից կամ արական սեռի այլ ազգականներից («Ելակետային ուսումնասիրություն գյուղատնտեսական արժեշղթայում գյուղական բնակավայրերի կանանց ներուժի եւ դերի շուրջ», Բիզնեսի աջակցման կենտրոն, ՕՔՍՖԱՄ, 2013 թվական):

Մի շարք օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունները, հիմնականում Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները, նպատակ ունեին կանանց համար մեծացնելու սոցիալական պաշտպանության սխեմաների մատչելիությունը եւ աջակցելու աշխատողների ընտանեկան պատասխանատվությունների ու կարիերայի միջեւ ավելի լավ հավասարակշռմանը: Օրինակ, երեք տարեկանից փոքր երեխա մեծացնող հղի կանայք ու աշխատողները կարող են նշանակվել գիշերային աշխատանքի, արտաժամյա աշխատանքի, ինչպես նաեւ հանգստյան եւ տոն օրերին՝ միայն իրենց համաձայնությամբ (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք): Սակայն դեռեւս կա պատասխանատու հայրությունը եւ խնամքի համար համատեղ պատասխանատվությունը խթանող միջոցառումների մեծ կարիք՝ հատկապես նպատակ ունենալով նվազեցնել կարծրատիպային ասոցացումները խնամքի աշխատանքի հետ՝ որպես «բացառապես կանացի» գործի:

19 Հիմնված այն կանանց մասնաբաժնի վրա, ովքեր ակտիվ չեն, այդ թվում՝ տնային տնտեսուհիները. http://www.armstat.am/fi le/article/ka-na-jq_ev_txamardik.pdf
20 Ըստ «Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզերից ընտրված անասնաբույժների համար կազմակերպված սեմինարի ձեռքբերումների մասին հաշվետվության»՝ 78 մասնակիցներից միայն երեքն էին կանայք: «Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամ» (CARD), 2013 թվական

### 3.2.2 Ընտանեկան ֆերմերային տնտեսություն

Գյուղատնտեսության ոլորտը ներկայումս կազմված է մոտավորապես 340,000 մասնավոր տնտեսություններից՝ յուրաքանչյուրը միջինը 1.3 հեկտար տարածքով («Փաստորեն, սուղ հողային ռեսուրսներ ունեցող երկրում մարդիկ գյուղատնտեսությամբ զբաղվում են 1,284,000 հողակտորների վրա: Այսօր յուրաքանչյուր ֆերմերային տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.5 խոշոր եղջերավոր անասուն, 1.7 ոչխար, եւ յուրաքանչյուր 5 ֆերմերային տնտեսության բաժին է ընկնում մեկ խոզ: Նման իրավիճակներում զարգացած արտադրողական տեխնոլոգիաների կիրառումը, աշխատանքների մեքենայացումը, գյուղատնտեսական ապրանքների ծախսերի կրճատումը եւ արտադրողականության բարձրացումը գրեթե անհնար են: Ձեռքով կատարվող աշխատանքը գերակա է ֆերմերային տնտեսություններում»: Հանրային խորհուրդը՝ ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտում համագործակցության զարգացման անհրաժեշտության մասին, 2010 թվական): Սրանցից միայն մոտ 200,000-ն են գործող ֆերմերային տնտեսություններ, որոնց կեսը մշակվում են բնամթերային կամ կիսաբնամթերային գյուղատնտեսության սկզբունքով: Կանխիկ գումարով աշխատող խոշորամասշտաբ հողագործական ֆերմերային տնտեսություն վարում է ֆերմերների դեռեւս մի շատ փոքր մասը: Ըստ գնահատականների, կան մոտավորապես 20,000-30,000 ֆերմերային տնտեսություններ՝ մեկ ֆերմերին բաժին ընկնող առնվազն 3-5 հեկտար հողատարածքով, եւ բոլոր ֆերմերային տնտեսությունների միայն 6 տոկոսն ունեն ավելի քան 10 հա մակերեսով հողատարածքներ:[21] Փոքր ֆերմերային տնտեսությունները Հայաստանում արտադրում են համախառն գյուղատնտեսական արտադրանքի 90 տոկոսը: Ցորենը աճեցվող հիմնական մշակաբույսն է, որին հաջորդում են կարտոֆիլը, այլ բանջարեղենային կուլտուրաներ, հատիկաընդեղեն բույսեր եւ յուղատու մշակաբույսեր: Բուծվող կենդանիների թվում են խոշոր եղջերավոր կենդանիներ, խոզեր, որոշ քանակի ոչխար եւ թռչուններ: Գոյություն ունեն մոտ 350 գրանցված ձկնաբուծարաններ, որոնք արտադրում են տարեկան 5.5 հազար տոննա ձուկ:

Թեպետ ֆերմերային տնտեսությունների կամ հողի սեփականատիրության վերաբերյալ ըստ սեռի տարաբաժանված տվյալներ չկան, գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների 26.5 տոկոսի գլխավորը կանայք են («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական), ինչը շատ դեպքերում կապված է տղամարդկանց արտագաղթի հետ: 2010 թվականին գյուղական համայնքներում եկամտի մոտ 38 տոկոսը ստացվել է գյուղատնտեսությունից, որի կեսից մի փոքր պակասն առաջացել է գյուղատնտեսական ապրանքների վաճառքից: Վճարվող զբաղվածությունը կազմել է գյուղական բնակավայրերում եկամուտների 29 տոկոսը, 20 տոկոսի աղբյուրը թոշակները ու սոցիալական վճարներն են, իսկ մոտ 9 տոկոսը ստացվել է մասնավոր դրամական փոխանցումներից («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):

Ընտանեկան ֆերմաներում ոչ պաշտոնապես աշխատող գյուղաբնակ կանայք Աշխատանքային օրենսգրքով սահմանված որեւէ փոխհատուցում չեն ստանում, օրինակ՝ հիվանդության պատճառով արձակուրդ եւ երեխայի խնամքի նպաստ, քանի որ այդ կանայք համարվում են կամ ինքնազբաղված, կամ՝ ոչ ակտիվ: Գյուղական համայնքներում՝ զբաղվածություն ունեցող կանանց երկու երրորդը դրամային եկամուտ չի ստանում, երբ ինքնազբաղված է («Հայաստանի գենդերային բարոմետր» հետազոտություն, Երեւանի պետական համալսարան, 2015 թվական):

Ընտանեկան ֆերմերային տնտեսություններում առկա է աշխատանքների՝ սեռով պայմանավորված հստակ բաժանում: Տղամարդիկ սովորաբար ներգրավված են զգալի կապիտալ ներդրումներ պահանջող այնպիսի աշխատանքներում, որոնք ներառում են մեքենասարքավորումների եւ տեխնոլոգիաների առավել մեծ քանակ, եւ այդ աշխատանքներում նրանք ավելի լավ են վարձատրվում:

Գյուղական բնակավայրերի կանայք լայնորեն ներգրավված են անասնաբուծության՝ մասնավորապես կաթնամթերքի արտադրության մեջ (այդ թվում՝ կթում, կաթի մշակում, կաթի եւ այլ կաթնամթերքի շուկայահանում): Երբեմն, ելնելով տնային տնտեսության համար կաթնամթերքի արտադրության կարեւորության աստիճանից, ընտանիքի անդամները (կանայք եւ տղամարդիկ) միմյանց օգնում են անասնաբուծության հետ կապված հարցերում. տղամարդիկ կթում են կովերին, երբ կանայք տանը չեն, կանայք մաքրում են անասնագոմը, եթե բացակայում են տղամարդիկ («Գյուղատնտեսության զարգացումը Սյունիքի մարզում» ծրագրի գենդերային գնահատման հաշվետվություն, ACDI VOCA):

21 Ինչպես որ հաշվարկվել է ACDI/VOCA ամերիկյան շահույթ չհետապնդող կազմակերպության կողմից՝ հետեւյալ զեկույցում. ՍԱՋԾ, «Գյուղատնտեսության համեմատական վերլուծություն Հարավային Կովկասում», 2013 թվական:

Սովորաբար տղամարդկանց կողմից իրականացվող անասնաբուծությունը, այդ թվում՝ անասնագոմի ախտահանումը, խոտհունձը, խոտի տեղափոխումը, խոտի դարսումը հակերի մեջ, խոտի կտրումը, անասունի մորթումն ու մսի վաճառքը ներկայացվեցին որպես անասնաբուծության ոլորտում ամենադժվար աշխատանքները, եւ այնտեղ կանանց մասնակցությունը սովորաբար չի ակնկալվում: Այսուհանդերձ, անասնաբուծության մեջ աշխատանքների գենդերային բաժանումը տարբերվում է ըստ մարզերի՝ կախված կանանց եւ տղամարդկանց դերերի ու պատասխանատվությունների մասին սոցիալական ընկալումներից:

Կաթնամթերքի մշակման ու վաճառքի հարցում կանայք գլխավոր որոշում կայացնողներն են. նրանք են որոշում, թե ընտանիքի սպառման համար ինչ քանակության կաթ, պանիր եւ մածուն է անհրաժեշտ, եւ թե ինչքան կաթ ու կաթնամթերք պետք է վաճառել (N. Martirosyan, Household Negotiation and The Care Economy, Oxfam 2013): Կանայք նաեւ պատասխանատու են այս շուկայական գործողությունների արդյունքում ստացված եկամտի տնօրինման եւ ամենօրյա ծախսերին առնչվող որոշումների համար: Անասնագոմի վերանորոգման եւ/կամ ֆերմերային տնտեսության մեջ կատարվող այլ ներդրումների համար հիմնականում պատասխանատու են տղամարդիկ (N. Martirosyan, Household Negotiation and The Care Economy, Oxfam 2013):

Թռչնաբուծությունը Հայաստանում գրեթե ամբողջովին կանանց պատասխանատվությունն է, այդ թվում՝ կերակրելը, լվալը, մորթելը եւ փոքրամասշտաբ առեւտուրը (ձվերի եւ թռչնի):[22] Թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ իրենց հստակ դերերով ու պարտականություններով խորապես ներգրավված են մշակաբույսերի աճեցման ոլորտում: Կանայք հիմնականում պատասխանատու են սերմերի, այդ թվում՝ դրանց գնման, ցանման եւ շուկայահանման համար, ինչպես նաեւ լայնորեն մասնակցում են մշակաբույսերի մեծ մասի բերքահավաքին, երբ դա կատարվում է ձեռքով, քանի որ նրանք սովորաբար չեն վարում տրակտոր կամ շահագործում այլ գյուղատնտեսական մեքենասարքավորումներ (Թեեւ պաշտոնական վիճակագրություն չկա, բայց փաստը գրանցվել է Հայաստանում կատարված տարբեր հետազոտությունների ժամանակ, այդ թվում՝ ACDI VOCA-ի՝ «Գյուղատնտեսության զարգացումը Սյունիքի մարզում» ծրագրի Գենդերային գնահատման հաշվետվության կողմից, 2011թ-ի հունվարին ՀՄՀ-Հայաստանի («Հազարամյակի մարտահրավերներ-Հայաստան») «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի «Գենդերային մոտեցումների» կողմից, ինչպես նաեւ բարձրացվել է Գնահատման շրջանակում իրականացված ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների կողմից): Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայի անդամ եւ ոչ անդամ ֆերմերների շրջանում 2007 թվականին իրականացված հարցման համաձայն՝ բերքահավաք աշխատանքների մեծ մասն իրականացվում է կանանց կողմից: Կոնկրետ այս հետազոտության արդյունքների համաձայն՝ գյուղատնտեսությամբ զբաղվող կանանց 45.7, իսկ տղամարդկանց 30 տոկոսն են կատարում բերքահավաք աշխատանքներ («Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայում գյուղական շրջանների կանանց մասնակցության պատճառական վերլուծություն», (ԱՀԿՄԿ, ԳԱՖ), Երեւան, 2007 թ., էջ 28): Թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ ներգրավված են տնամերձ հողամասերի աշխատանքներում:

Հայաստանում իրացման նպատակով արտադրվող երկու հիմնական մշակաբույսերը ծիրանն ու խաղողն են, որտեղ կանայք հիմնականում պատասխանատու են ծիրանը տուփերի մեջ դարսելու, մշակելու եւ չորացրած մրգեր, հյութեր ու ջեմեր պատրաստելու համար: Տղամարդիկ հիմնականում մասնակցում են մշակման, պարարտացման, ջրման, ամենօրյա պահպանման եւ հողի կառավարման աշխատանքներին: Տղամարդիկ նաեւ իրականացնում են խաղողի մշակման եւ գինու պատրաստման աշխատանքներ («Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայում գյուղական շրջանների կանանց մասնակցության պատճառական վերլուծություն», (ԱՀԿՄԿ, ԳԱՖ), Երեւան, 2007 թ., էջ 28):

## 3.3 Ենթակառուցվածքներն ու տեխնոլոգիաները գյուղական բնակավայրերում եւ դրանց կապը ծախսվող ժամանակի հետ

Գյուղատնտեսական արտադրության մեջ ոռոգումը շարունակում է մտահոգիչ հարց մնալ: Խորհրդային Միությունում 1985 թվականի դրությամբ ոռոգվող հողատարածքները

22 Թեեւ պաշտոնական վիճակագրություն չկա, բայց փաստը գրանցվել է Հայաստանում կատարված տարբեր հետազոտությունների ժամանակ, այդ թվում՝ ACDI VOCA-ի՝ «Գյուղատնտեսության զարգացումը Սյունիքի մարզում» ծրագրի Գենդերային գնահատման հաշվետվության կողմից, 2011թ-ի հունվարին ՀՄՀ-Հայաստանի («Հազարամյակի մարտահրավերներ-Հայաստան») «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի «Գենդերային մոտեցումների» կողմից, ինչպես նաեւ բարձրացվել է Գնահատման շրջանակում իրականացված ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների կողմից:

կազմում էին 300,000 հա, սակայն 1990-ական թվականների վերջին ոռոգվող հողատարածքներն արդեն ընդամենը 112,300 հա էին: Սա մասամբ պայմանավորված է 1990-ական թվականների տնտեսական ու անվտանգության ճգնաժամերի հետ, բայց նաեւ այն պատճառով, որ ոռոգման համակարգերն ու շահագործման կառուցվածքները նախագծված էին մեծամասշտաբ գյուղատնտեսական ֆերմերային տնտեսությունների ու ձեռնարկությունների համար եւ չէին հարմարացվել փոքր մասշտաբի անհատ ֆերմերների ցրված հողամասերի համար: Ոռոգման վերականգնումը գտնվել է միջազգային օժանդակության եւ գործընկերությունների, այդ թվում՝ ՊԳԿ-ի ուշադրության կենտրոնում, ու թեեւ դեռեւս շատ անելիք կա, անկումը կանգնեցվել է, եւ 1995 թվականից հետո ոռոգվող տարածքները աճել են տարեկան 5 հեկտարով («Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայում գյուղական շրջանների կանանց մասնակցության պատճառական վերլուծություն», (ԱՀԿՄԿ, ԳԱՖ), Երեւան, 2007 թ., էջ 28):

Գոյություն չունեն ըստ սեռի տարաբաժանված տվյալներ ոռոգվող հողատարածքներում արտադրության եւ դրանց հասանելիության վերաբերյալ, կամ Ջրօգտագործողների միություններում (ՋՕՄ) կանանց ընդգրկվածության եւ անդամության մասին: Հաշվի առնելով ոռոգվող գյուղարտադրության եկամտաբերության ավելի մեծ ներուժը՝ անհրաժեշտություն կա լրացուցիչ հետազոտության՝ պարզելու, թե ինչ չափով են հասանելի ոռոգվող հողատարածքները կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների համար, ոռոգվող հողատարածքների որքան մասն է գրանցված միայն ընտանիքի արական գլխավորի անունով, եւ թե արդյոք կանայք ակտիվ են ՋՕՄ-ներում:

Այլ ենթակառուցվածքների եւ ծառայությունների հասանելիության առումով վերջին երկու տասնամյակում տեղի են ունեցել նշանակալի բարելավումներ, սակայն դեռեւս զգալի աշխատանք կա կատարելու հիմնական ենթակառուցվածքների թարմացման եւ ենթակառուցվածքների զարգացման հարցում քաղաքային եւ գյուղական շրջանների միջեւ շարունակվող խզվածքը մեղմելու նպատակով: Գյուղական համայնքներում եւ հատկապես հեռավոր լեռնային շրջանների համայնքներում չափազանց կարեւոր են տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավումները: Ջրամատակարարման ոլորտում զգալի ներդրումները հանգեցրել են բնակչության համար վստահելի եւ որակյալ ջրամատակարարման: 2013 թվականի դրությամբ՝ կենտրոնացված ջրամատակարարման համակարգ հասանելի է եղել գյուղական բնակչության 96 տոկոսի համար («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական), իսկ ջրի հասանելիության օրական ժամերը աճել են՝ սկսած 2008 թվականից: Այսուհանդերձ, գյուղական շրջաններում մոտ 560 համայնք միացած չէ ցանցին, եւ 40,000 գյուղական բնակչի համար հասանելի չէ խողովակաշարային ջրամատակարարումը (ԱԶԲ, Քաղաքականության վրա հիմնված վարկ եւ Տեխնիկական աջակցության դրամաշնորհ. Հայաստան. Ենթակառուցվածքների կայունությանն աջակցության ծրագիր, հուլիս, 2014 թվական):

2015 թվականին հրապարակված Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը վիճակագրական վերլուծական զեկույցը փաստում է, որ 2014 թ, տվյալներով քաղաքային եւ գյուղական շրջանների բնակչության մոտ 50 տոկոսը չի ունեցել չընդհատվող սառը ջրի մատակարարում (Ազգային վիճակագրական ծառայություն եւ Համաշխարհային բանկ, «Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց, Երեւան 2015, էջ 162):

Քանի որ տնային տնտեսություններում կանայք ջրի հիմնական օգտագործողներն են, ինչը կապված է կանանց գենդերային դերերով պայմանավորված կենցաղային աշխատանքների հետ, նրանք լրջորեն տուժում են ջրի սպառման սահմանափակումներից (ԱԶԲ (2015), Հայաստանի գենդերային գնահատում): Այն դեպքերում, երբ չկա կենտրոնացված ջրամատակարարում, կանայք նաեւ պատասխանատու են ձեռքով ջրի տեղափոխման համար (ԱԶԲ (2015), Հայաստանի գենդերային գնահատում), ինչը հանգեցնում է նրանց աշխատաժամանակի լրացուցիչ ծանրաբեռնման:

Ենթակառուցվածքների զարգացումն ու տնային տնտեսությունների արդիականացումը ավելի նվազ մակարդակի վրա է գյուղական շրջաններում, այդ թվում՝ լվացքի մեքենաների, աման լվացող մեքենաների եւ այլ կենցաղային տեխնիկայի, ինչպես նաեւ տրանսպորտի եւ տեղաշարժի մատչելիության առումով: Սա ուղիղ ազդեցություն է ունենում գյուղական բնակավայրերի կանանց աշխատանքային ծանրաբեռնվածության վրա, քանի որ կենցաղային աշխատանքները եւ վերարտադրողական գործառույթը սովորաբար կապված են կանանց գենդերային դերերի հետ: Կանանց կենցաղային ծանրաբեռնվածությունը երկուշաբթիից կիրակի կազմում է օրական 6:06 ժամ, մինչդեռ քաղաքային բնակավայրերում ապրող կանանց դեպքում այս ծանրաբեռնվածությունը

կազմում է օրական 4:53 ժամ, իսկ գյուղական բնակավայրերի տղամարդկանց դեպքում՝ օրական 2.37 ժամ («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):

### 3.4 Գույքային իրավունքներ եւ հողի նկատմամբ իրավունքների դե ֆակտո իրացում

Հայաստանի գյուղական շրջաններում ամենակարեւոր ռեսուրսները հողն ու անշարժ գույքն են: Թեեւ չկան ըստ սեռի տարաբաժանված պաշտոնական տվյալներ՝ «Անասնապահության զարգացումը Սյունիքի մարզում» գենդերային հետազոտության շրջանակներում բացահայտվել էր, որ ընտանիքներում տների սեփականատերերի մեծամասնությունը տղամարդիկ են, եւ սեփականատերերի միայն մեկ երրորդն են կանայք:[23]

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կանանց եւ տղամարդկանց տալիս է սեփականության հավասար իրավունքներ, սակայն գործնականում կանայք հազվադեպ են օգտվում այդ իրավունքներից: Հիմնական պատճառները հետեւյալն են.

- Գրանցման գործելակերպեր. Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի կառավարությունը 1991-1992 թվականներին սեփականաշնորհեց հողը՝ այն բաժանելով տնային տնտեսությունների միջեւ: Հողի սեփականությունը տրվեց նրան, ով ճանաչվում էր որպես ընտանիքի գլխավոր, եւ թեեւ օրենքով սա կարող էր լինել թե՛ կինը, թե՛ տղամարդը, հողերի մեծամասնությունը գրանցվեց տղամարդկանց անուններով՝ որպես ողջ տնային տնտեսության «ներկայացուցիչ»: Կանայք հողի սեփականության իրավունք ունեին միայն այն դեպքերում, երբ չկար ընտանիքի գլխավոր համարվող տղամարդ: Սա նշանակում է, որ թեեւ կանայք, որպես տնային տնտեսության անդամ, իրավաբանորեն նույնպես ունեին սեփականության իրավունք տրված հողի նկատմամբ, նրանք սեփականության փաստացի իրավունքներ չունեին այդ հողերի նկատմամբ: Ներկայում կանայք ավելի ու ավելի են դառնում գյուղացիական տնտեսության կառավարողներ, քանի որ տղամարդիկ դիմում են աշխատանքային միգրացիայի: Օրինակ Տավուշի մարզում, որտեղ միգրացիայի մակարդակը բավականին բարձր է, հողօգտագործողների մեծամասնությունը կանայք են («Ելակետային ուսումնասիրություն գյուղատնտեսական արժեշղթայում գյուղական բնակավայրերի կանանց ներուժի եւ դերի շուրջ», Բիզնեսի աջակցման կենտրոն, ՕՔՍՖԱՄ, 2013 թվական): Այնուամենայնիվ, սա դե ֆակտո կառավարումն է, իսկ կանանց կողմից հողի սեփականատիրության աստիճանը շարունակում է ցածր մնալ, եւ սեփականության գրանցումը դեռեւս կատարվում է տնային տնտեսության գլխավոր համարվող տղամարդկանց անունով:
- Պատրիլոկալ ամուսնություններ եւ ժառանգության գործելակերպեր. Ծնողները սովորաբար որդուն ապահովում են տնով՝ որպես ժառանգություն, մինչդեռ դստեր դեպքում ակնկալվում է, որ նա ամուսնանա եւ լքի ծնողների տունը: Պատրիլոկալ ամուսնության արդյունքում կանայք տեղափոխվում են՝ ապրելու ամուսնու ընտանիքի հետ: Նրանք հայրական ընտանիքին հազվադեպ են ներկայացնում հողի սեփականության պահանջներ, եւ սովորաբար նաեւ չեն ճանաչվում իրենց նոր ընտանիքի հողի համասեփականատեր:
- Ռեսուրսների հասանելիություն. Ի հավելումն, կանանց համար ավելի բարդ է հող գնելը, որովհետեւ ֆինանսական ռեսուրսների նկատմամբ հսկողությունն ու եկամտի կամ վարկի միջոցով դրանց հասանելիությունը սահմանափակ են նրանց համար:
- Կանանց եւ ամբողջական համայնքների սահմանափակ գիտելիքներ հողի նկատմամբ կանանց սեփականության իրավունքների մասին Սա նաեւ ներառում է հողն իրենց անունով չգրանցելու հետեւանքների եւ իրենց իրավունքների մասին սահմանափակ գիտելիքները:

23 Հարցվածների 3.4 տոկոսը նշել է, որ տունը տղամարդու եւ կնոջ համատեղ սեփականությունն է: Հարցվածների 62.1 տոկոսը նշել է, որ տղամարդն է տան սեփականատերը, իսկ 34.5 տոկոսը նշել է, որ կինն է սեփականատերը (այս թիվը բարձր է կնոջ գլխավորությամբ ընտանիքներ ներկայացնող պատասխանողների շրջանում) («Գյուղատնտեսության զարգացումը Սյունիքի մարզում» ծրագրի գենդերային գնահատման հաշվետվություն):

### 3.5 Վարկերի եւ ձեռներեցության հասանելիություն

Հայաստանում գենդերային անհավասարությանը նպաստող գլխավոր գործոններից մեկը տղամարդկանց եւ կանանց շրջանում տնտեսական ձեռներեցության ասպարեզում շարունակվող անհավասարությունն է: Գյուղական բնակավայրերի կանայք սովորաբար օգտվում են միկրո վարկերից կամ վարկային ծրագրերից միայն այն դեպքերում, երբ դրամական միջոցների աղբյուրը դոնոր կազմակերպություններն են, որոնք այդ միջոցները տրամադրում են կանանց ներգրավման որոշակի աստիճանի ապահովման պայմանով (քվոտաներ), եւ այս երեւույթի տարածվածությունը վերջին տասնամյակում աճել է («Կանանց տնտեսական հզորացման աստիճանը Հայաստանում», ՔՅՅՑ, 2012 թվական):

Այսուհանդերձ, եւ չնայած Հայաստանի կառավարության՝ ԿՆԽՎԿ-ի, «Պեկին +20» գործընթացի եւ Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ-ներ) ներքո ստանձնած հանձնառություններին՝ դեռեւս պետք է իրականացվեն միջոցառումներ, որոնք գյուղական բնակավայրերի կանանց կառաջարկեն ուսուցում, վերապատրաստում կամ մասնագիտական կրթություն՝ նպատակ ունենալով նրանց զինել գյուղատնտեսության եւ գյուղացիական ձեռնարկատիրության ոլորտում համապատասխան հմտություններով եւ կարողություններով:Դեռեւս կարիք կա աշխատելու, որպեսզի օժանդակ ծառայությունները, հարկային քաղաքականությունները եւ փոքր ու միջին ձեռնարկություններին աջակցության քաղաքականությունները դառնան գենդերային խնդիրների նկատմամբ զգայուն: Գյուղական բնակավայրերի կանանց ձեռներեցությունը խրախուսելու ազգային քաղաքականությունը կամ ռազմավարությունը կարող է Հայաստանի համար լինել ռազմավարական առաջին քայլը՝ գյուղական շրջանների զարգացման եւ գենդերային հավասարության մասով Հայաստանի նպատակներին հասնելու հարցում, ինչպես նաեւ ԿՆԽՎԿ-ի 14-րդ հոդվածի հովանու ներքո նրանց միջեւ սիներգետիկ կապերը հզորացնելու գործում (Հոդված 14՝ գյուղական շրջանների կանանց մասին):

Այն խոչընդոտները, որոնք կանայք ստիպված են հաղթահարել նախքան բիզնես ոլորտ մուտք գործելը, ներառում են անորոշության ու ռիսկից խուսափելու զգացումը, սահմանափակ ինքնավստահությունը այն ոլորտներում, որոնք սոցիալապես կամ կարծրատիպերից ելնելով չեն համարվում կանանց համար, բիզնես կոնտակտների պակասը, կանանց դերերի, տնտեսության եւ մասնավորապես բիզնեսի մեջ նրանց մասնակցության շուրջ արմատացած եւ շարունակվող կարծրատիպերը: Նյութական պատճառներից են՝ վարկեր ստանալու դժվարությունները, դրամական միջոցների ու գրավի համար գույքի սահմանափակ հասանելիությունը, ծանր տոկոսադրույքները, անբարենպաստ բիզնես միջավայրը, շարժունակության հետ կապված խոչընդոտները, մեծ շուկաների սահմանափակ հասանելիությունը եւ բիզնեսը հեշտացնելու նպատակով պետական պաշտոնյաներին տրվող ոչ պաշտոնական վճարումները (Գենդերային իրավիճակի գնահատում, ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան): Նույնիսկ այն դեպքերում, երբ կանայք իրավաբանորեն համարվում են սեփականատերեր, այդ թվում՝ հողի, սեփականության նրանց իրավունքների ամբողջական իրացումը, ներառյալ սեփականության գործածումը որպես գրավ, սովորաբար սահմանափակվում է: Սա հիմնականում տեղին է ունենում այն պատճառով, որ սեփականությունը սովորաբար գրանցված է լինում միայն ամուսնու անունով (որպես կանոն համարվում է տնային տնտեսության գլխավորը):

Թեեւ հանրության կողմից ընդունելի է այն, որ կանայք վարեն մանր եւ փոքր բիզնես, նշվում է, որ կանայք, ովքեր տնօրինում են ավելի մեծ ձեռնարկություններ, հնարավոր է՝ ունենն ազդեցիկ տղամարդկանց հովանավորության կարիքը (Արձանագրվել է սույն զեկույցի համար կատարված դաշտային հետազոտության ընթացքում): Շատ գործարար բանակցություններ տեղի են ունենում ոչ ֆորմալ համատեքստում, ինչպես օրինակ՝ճաշերի ընթացքում, սակայն Հայաստանի որոշ շրջաններում միջավայրի կողմից անընդունելի կլինի, եթե բիզնեսով զբաղվող կինը առանց արական սեռի բարեկամի ներկայության հանդիպի արական սեռի բիզնես գործընկերոջ հետ: Նման խոչընդոտները կարող են սահմանափակել բիզնեսով զբաղվող կանանց շփումներն այնպես, որ դրանք տեղի ունենան միայն իրենց ծանոթների շրջանակում: Այսուհանդերձ, ընտանիքի շրջանակում կին ձեռնարկատերերի մեծ մասը դեռեւս գտնում է, որ ունի տղամարդու աջակցության կարիք, որն ստացվում է ընտանիքի արական անդամներից, հատկապես այն դեպքերում, երբ կանայք սկսում են տնային տնտեսություն լրացուցիչ եկամուտ բերել («Հայաստան. Երկրի գենդերային իրավիճակի գնահատում», ԱԶԲ, հուլիս, 2015 թվական): Որոշ ամուսիններ, սակայն, չեն թույլատրում իրենց կանանց աշխատել նույնիսկ այն դեպքում, երբ ընտանիքը կարիք ունի լրացուցիչ եկամտի:

*«Գործազրկության մակարդակը համայնքում շատ բարձր է: Եթե աշխատանք լիներ, ոչ ոք չէր արգելի կանանց աշխատել: Սակայն եթե ընտանիքի տնտեսական վիճակը բավականին լավ է, ապա ամուսինների 20-30 տոկոսը չէր ցանկանա, որպեսզի իրենց կանայք աշխատեին[24]»:*

## 3.6 Տեղեկատվության, տեղաշարժի, շուկաների եւ գյուղատնտեսական միջոցների մատչելիություն

Արտադրական ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը լուրջ խոչընդոտ է գյուղաբնակ կանանց համար՝ գյուղատնտեսական ձեռներեցությամբ կամ ֆերմերային տնտեսության կառավարմամբ զբաղվելու համար: Օրինակ՝ գյուղաբնակ կանանց համար քիչ հասանելի է կամ հասանելի չէ գյուղատնտեսական տեխնիկան, ինչպիսիք են՝ տրակտորները, կոմբայնները եւ հնձիչ մեքենաները: Մեքենասարքավորումները կարծրատիպերի ուժով կապված են տղամարդու գենդերային դերերի հետ: Նույնիսկ տնային տնտեսությունների կին ղեկավարներն անձամբ չեն օգտագործում այս ռեսուրսները. նրանք դիմում են վարձակալության օգնությանը կամ խնդրում են բարեկամ տղամարդկանց օգնությունը («Զրից դեպի շուկա» բաղադրիչի գենդերային մոտեցումները, ՀՄՅ-Հայաստան, հունվար, 2011 թվական): Նույն սահմանափակ մատչելիությունը վերաբերում է պարարտանյութերին, սերմերին եւ գյուղատնտեսական այլ միջոցների: Կանայք սովորաբար պատասխանատու են սերմերը գնելու եւ դրանց հետ աշխատելու հարցում, սակայն՝ միայն փոքր քանակության եւ այն դեպքում, երբ սերմերը հասանելի են մոտ վայրերում:[25]

Ավտոմեքենաներն ու մեքենասարքավորումները հազվադեպ են հանդիսանում կանանց սեփականությունը: Գյուղական բնակավայրերում ավտոմեքենաների ու գյուղտեխնիկայի ավելի քան 95 տոկոսի սեփականատերերը, ինչպես նաեւ մարզերում գյուղատնտեսական տեխնիկա վարողների 100 տոկոսը տղամարդիկ են:24 Ավտոմեքենաների կին սեփականատերերը եւ կին վարորդները հարաճուն ձեւով ավելանում են քաղաքային բնակավայրերում, հատկապես՝ Երեւանում, սակայն շարունակում են հազվադեպ հանդիպել գյուղական բնակավայրերում («Հայաստան. Երկրի գենդերային իրավիճակի գնահատում», ԱԶԲ, հուլիս, 2015 թվական):

Տրանսպորտի հետ կապված խնդիրները խոչընդոտ են կանանց համար՝ եկամուտ ստեղծելու գործում: Կանանց տեղաշարժի սահմանափակությունը ուղղակի կերպով կապված է նրանց համար շուկաների, ուսուցման, տեղեկատվության, բիզնես շրջանակների, մատակարարների եւ վարչարարության սահմանափակ հասանելիության հետ: «Քաղաքային թղթաբանությունը» կարծրատիպի ուժով ասոցացվում է «տղամարդու անելիքի» հետ: Ինչպես բացահայտվել էր Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) իրականացրած դաշտային հետազոտության ընթացքում, տեղաշարժի սահմանափակումները առավել հաճախ կապված են սոցիալական նորմերի հետ, քան ճանապարհների կամ տրանսպորտային ենթակառուցվածքների.

**«Գավառում հարցվողները պարզաբանել են, որ մեկ տասնամյակ առաջ անպարկեշտ կդիտվեր, եթե կինը տաքսիով երթեւեկեր մենակ: Նրան պետք է ուղեկցեր որեւէ տղամարդ, այլապես այդ կինը համայնքի կողմից կենթարկվեր քննադատության: Այսօր այդ ընկալումները փոխվել են, սակայն պարզ չէ, թե արդյոք այդ փոփոխությունը կապված է հասարակության դիրքորոշման հետ, թե պարզապես անհրաժեշտությունից դրդված: Որոշ պատասխանողներ նշել են, որ կանայք չեն զբաղեցնում որոշակի նստատեղեր հասարակական տրանսպորտում (կամ միկրոավտոբուսներում). օրինակ այնպիսի տեղեր, որոնք մոտ են վարորդին (որը տղամարդ է) կամ այլ տղամարդկանց: Մարզերի երիտասարդների հետ ակտիվորեն աշխատող, Երեւանում տեղակայված մի ՀԿ նշել է, որ շրջաններում ապրող երիտասարդ կանանց բարդ է հրավիրել մասնակցելու մայրաքաղաքում անցկացվող սեմինարներին, քանի որ հաճախ ընտանիքները թույլ չեն տալիս գնալ քաղաք, եթե նրանց ազգական որեւէ տղամարդ չի ուղեկցում: Նույն վերաբերմունքը նաեւ խոչընդոտում է, որպեսզի երիտասարդ կանայք ուղեւորվեն մայրաքաղաք՝ սովորելու նպատակով»:**

*Ասիական զարգացման բանկ (2015 թ.), Հայաստանի Հանրապետություն «Երկրի գենդերային իրավիճակի գնահատում»*

24 Խորացված հարցազրույց Ծրագրի թիմի անդամի հետ, Գորիս, արական սեռ:
25 Սույն զեկույցի համար իրականացված ուսումնասիրության ընթացքում արձանագրված տեսակետ

Կաթի ու այլ կաթնամթերքի իրացումը հիմնականում տեղի է ունենում համայնքային մակարդակում, այլ ոչ թե քաղաքային խանութներում կամ վերամշակման գործարաններում: Որոշ համայնքներում կաթը հենց համայնքային մակարդակում հավաքվում է մեծածախ գնորդների կողմից: Կաթի մեծածախ գնման համակարգերի բացակայության դեպքում հնարավոր է, որ ոմանք իրենց ստացած կաթը տանեն ամենամոտ գտնվող շուկան, սակայն տնային տնտեսության անդամները կաթն ուղիղ կաթի վերամշակման գործարան չեն տանում:[26] Արդյունքում կաթի շուկայի հասանելիությունը կանանց համար, ովքեր հիմնականում կաթի արտադրության պատասխանատուն են, կախված է՝ կաթի մեծածախ գնման՝ համայնքում առկա ենթակառուցվածքներից եւ համայնքի շուկայի հեռավորությունից: Սա մասնավորապես կարեւոր է՝ հաշվի առնելով գյուղական բնակավայրերի կանանց հանդիպած խոչընդոտները՝ կապված ֆիզիկական տեղաշարժի հետ:

Տրանսպորտային խնդիրները կապված են ոչ միայն դեպի Երեւան հեռավորության հետ, այլ նաեւ մարզերի ներսում հեռավորությունների հետ, որտեղ երկար տարածությունները, վատ միջհամայնքային ճանապարհներն ու անբավարար հասարակական տրանսպորտը դժվարություններ են ստեղծում ձեռնարկատիրական գործունեության եւ մարդկանց միջեւ հաղորդակցության համար, հատկապես կանանց պարագայում (Բիրգիտա Ռիստրանդ, Արմինե Մխիթարյան, «Կանանց հզորացումը եւ համագործակցությունը Հայաստանում՝ Սյունիքի մարզի օրինակի հիման վրա», ԵԱՀԿ երեւանյան գրասենյակ, Երեւան, 2007 թվական): Սույն զեկույցի համար իրականացված դաշտային հետազոտության ժամանակ գյուղական բնակավայրերի կանայք բողոքեցին Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ)[27] եւ Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ)[28] տրամադրած խորհրդատվական ծառայություններից օգտվելու հետ կապված դժվարություններից:

26 Գենդերային գնահատում՝ կատարված «Անասնապահության զարգացումը Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակներում:
27 Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը գտնվում է Երեւանում, իսկ մարզային գրասենյակները՝ մարզկենտրոններում. այս պատճառով սահմանափակ տրանսպորտային հնարավորություններ ունեցող կանայք դժվարանում են օգտվել նրանց խորհրդատվական ծառայություններից. http://asrc.am/index.php?id=2357 (հայերեն)
28 Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ) գտնվում է Երեւանում, իսկ մարզային գրասենյակները՝ մարզկենտրոններում. այս պատճառով սահմանափակ տրանսպորտային հնարավորություններ ունեցող կանայք դժվարանում են օգտվել նրանց ծառայություններից. http://www.smednc.am/en/home/

# 4. Պարենային ապահովություն եւ սնուցում

**«Հասարակությունների մեծ մասում կանայք առաջնային դեր ունեն առկա պարենը սննդային ապահովության վերածելու գործում, հատկապես փոքր երեխաների համար: Նրանց՝ այդպես վարվելու կարողությունը պայմանավորված է հավելյալ միջոցների առկայությամբ, ինչպիսիք են՝ առողջապահության, ջրի, էլեկտրաէներգիայի հասանելիությունը, սեփական մարդկային կապիտալը, այն միջավայրը, որտեղ ապրում են, այդ թվում՝ սանիտարական պայմանները, ինչպես նաեւ ժամանակ պահանջող եւ փոխադարձաբար միմյանց բացառող պահանջները: Մարդիկ կան, որ ապրում են առողջության համար անբարենպաստ՝ վատ սանիտարահիգիենիկ պայմաններ ունեցող միջավայրում՝, ինչը, չնայած պարենի բավարար քանակությանը, հանգեցնում է հաճախակի հիվանդությունների եւ սնուցման արդյունքների խանգարումների: Կան նորածիններ ու շատ փոքր տարիքի երեխաներ, որոնց մայրիկներն այնքան ժամանակային սահմանափակումներ ունեն, հատկապես գյուղատնտեսական օրացույցի եռուն շրջանում, որ ի վիճակի չեն լինում իրենց երեխաների համար հնարավորինս հաճախ ապահովել պատշաճ բազմազան սննդակարգ՝ շատ փոքր տարիքի երեխաների փոքրիկ ստամոքսների եւ սննդանյութերի մեծ կարիքների պատճառով» (Քաղաքականությանը նվիրված կլոր սեղան. «Գենդեր, պարենային ապահովություն եւ սնուցում», Համաշխարհային պարենային ապահովության կոմիտեի (ՊԱԿ) 37-րդ նիստ, 2011 թվական, էջ 2):**

*Համաշխարհային պարենային ապահովության կոմիտեի 37-րդ նիստ*

Փաստերը ցույց են տալիս, որ թեեւ պարենի առկայությունը անհրաժեշտ է սննդային ապահովության համար, դա բավարար չէ: «Պարենի առկայության ցանկացած մակարդակի դեպքում մանկական թերքաշության ցուցանիշները կարող են տատանվել 2-10% ցածր եւ 40-70% բարձր ցուցանիշների միջեւ» («Սնուցման վերադիտարկումը որպես զարգացման առանցք. լայնածավալ գործողության ռազմավարություն», Համաշխարհային բանկ, 2006 թվական): Թեեւ աղքատությունը կարող է խոչընդոտել սնուցման բարելավումներին, ապացույցները փաստում են, որ մենք չպետք է սպասենք աղքատության կրճատմանը, որպեսզի հասնենք սնուցման որոշակի բարելավման: Փաստերով հիմնավորված է, որ կանանց գլխավորությամբ աղքատ ընտանիքներում երեխաները սնուցման ավելի լավ արդյունքներ են ունենում, քան տղամարդկանց գլխավորությամբ ընտանիքներում, եւ երբ կանանց հնարավորություններն ընդլայնվում են, բարելավվում է ողջ ընտանիքի սնուցումը (Էյլին Քենեդի եւ Փոլին Փիթըրս, 1992 թ., «Տնային տնտեսության պարենային ապահովությունը եւ երեխայի սնուցումը. տնային տնտեսության գլխավորի եկամտի ու սեռի փոխհարաբերությունը», Համաշխարհային զարգացում 20):

Աշխատանքի բաշխման, ռեսուրսների հասանելիության, սեփականության եւ տնային տնտեսության մեջ իսկողության հարցերում գենդերային անհավասարություններն անմիջական ազդեցություն ունեն ողջ ընտանիքի առողջության վրա: Երբ թե՛ մայրերը եւ թե՛ հայրերը կիսում են համատեղ եւ պատասխանատու ծնող լինելու պարտականությունը, բարելավվում են նաեւ ողջ ընտանիքի առողջությունն ու սնուցումը:

Ընտանիքի եւ համայնքի մակարդակում պարենային ապահովության եւ սնուցման ապահովումը պահանջում է ներդրումներ կատարել սնուցման առումով խոցելի գյուղատնտեսության ոլորտում՝ ապահովելով կանանց ու տղամարդկանց իրավունքների իրականացումը եւ ծնողական պարտականությունների պատասխանատու եւ համատեղ կատարումը:

**«Ավելի լավ սնուցման, կրթության, տնտեսական, սոցիալական ու քաղաքական հնարավորությունների ընդլայնման միջոցով կանանց՝ որպես լիիրավ ու հավասար քաղաքացիներ լինելու դերում երկարաժամկետ ներդրումները կլինեն պարենային ապահովության ու սնուցման գործում կայուն բարելավումներ իրականացնելու միակ ճանապարհը»: Քաղաքականությանը նվիրված կլոր սեղան.**

*Քաղաքականությանը նվիրված կլոր սեղան. Գենդեր, պարենային ապահովություն եւ սնուցում, Համաշխարհային պարենային ապահովության կոմիտեի (ՊԱԿ) 37-րդ նիստ, 2011 թվական, էջ 5*

# 5. Գենդերային եւ սոցիալական կարգավիճակը Հայաստանի գյուղական շրջաններում

## 5.1 Գյուղաբնակ կանանց կարգավիճակը

### 5.1.1 Կանանց կարգավիճակը Հայաստանի գյուղական շրջաններում. համառոտեն պահպանվող կարծրատիպեր

Կանայք սովորաբար ընկալվում են երեխաներին խնամելու եւ կենցաղային աշխատանքների հետ՝ անկախ նրանից՝ աշխատում են տնից դուրս, թե ոչ, իսկ տղամարդիկ սովորաբար դիտվում են որպես իրենց ընտանիքի տնտեսական բարեկեցության ու գոյատեւման համար պատասխանատու՝ որպես հիմնական կերակրողը եւ ընտանիքի գլխավորը (Հայաստանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, «Գենդերային իրավիճակը Հայաստանում», 2005 թ., 2014 թվական)։ Սա ուղղակիորեն կապված է կարծրատիպային գենդերային դերերի հետ եւ անմիջական ազդեցություն ունի ռեսուրսների ու տնտեսական հնարավորությունների հասանելիության եւ չվարձատրվող, տնային գործերում եւ վերարտադրողական գործառույթի կատարման հարցերում կանանց իսկայական ծանրաբեռնվածության վրա։ Սա կարող է հանգեցնել ժամանակի բացակայության, կանանց՝ եկամտաբեր գործունեության մեջ ներգրավվելու կարողությունների սահմանափակման եւ կանանց տնտեսական կախվածության։

*Հանդուրժողական վերաբերմունքը ընտանեկան բռնության նկատմամբ Հայաստանի գյուղական վայրերում*

Գյուղաբնակ կանանց սոցիալական կարգավիճակի գնահատման մեկ այլ կարեւոր ցուցիչ է ամուսնական բռնության նկատմամբ կանանց ու տղամարդկանց վերաբերմունքը։ Այն կանայք, որոնք գտնվում են բարեկեցության ամենացածր քվինտիլում (բնակչության 20 տոկոսը), ունեն կրթության շատ ցածր մակարդակ եւ գյուղական բնակավայրերից են, ավելի մեծ հավանականությամբ կընդունեն ընտանեկան բռնության տեսքով այս ենթակայությունը. Ժողովրդագրության եւ առողջության հարցերով հետազոտության հարցաթերթիկի շրջանակում (2010 թ.) (ՀԺԱՀ, 2009 թ., Op. cit.) հարցնում էին, թե արդյոք կարելի է արդարացված համարել այն, որ ամուսինը ծեծում է կնոջը հետեւյալ դեպքերում. 1) վառել է կերակուրը, 2) վիճել է ամուսնու հետ, 3) դուրս է եկել առանց նրան տեղեկացնելու, 4) անտեսել է երեխաներին, եւ 5) հրաժարվել է նրա հետ սեռական հարաբերությունից։ Կրթական ցածր մակարդակ ունեցող կանանց 18.2 տոկոսն ամուսնական բռնությունն արդարացված է համարել այս իրավիճակներից առնվազն մեկի դեպքում (ՀԺԱՀ, 2009 թ., Op. cit.). ցուցանիշ, որը չորս անգամ ավելի ցածր է բարձրագույն կրթություն ունեցող կանանց դեպքում (ՀԺԱՀ, 2009 թ., Op. cit.)։ Բարեկեցության ցածր մակարդակում գտնվող կանանց 13.9 տոկոսը եւ հինգ ու ավելի երեխաներ ունեցող կանանց 25.1 տոկոսը նույնպես դա արդարացված են համարում վերոնշյալ իրավիճակներից մեկի դեպքում. այս ցուցանիշն ավելի քան երեք անգամ կրճատվում է երեխաներ չունեցող կամ բարեկեցության առումով ամենաբարձր քվինտիլներում (բնակչության 20 տոկոսը) գտնվող կանանց դեպքում։

Գյուղական վայրերում բնակվող կանայք ավելի հանդուրժող են ամուսնական բռնության նկատմամբ. գյուղաբնակ կանանց 11.8 տոկոսն արդարացված է համարում այս ագրեսիան՝ ի տարբերություն քաղաքաբնակ կանանց 8 տոկոսի։ Իրավիճակն ավելի վատ է Տավուշի մարզում, որտեղ կանանց 23 տոկոսն ընդունում է այն։

Թվերն ավելի բարձր են տղամարդկանց շրջանում։ Գյուղական շրջաններում տղամարդկանց 28 տոկոսը կնոջ նկատմամբ բռնությունն արդարացված է համարում՝ ի համեմատ քաղաքային բնակավայրերի տղամարդկանց 14.8 տոկոսի։ Թվերը բարձր են նաեւ տարրական կամ միջնակարգ կրթություն ունեցող եւ բարեկեցության ամենացածր քվինտիլներում (բնակչության 20 տոկոսը) գտնվող տղամարդկանց շրջանում, երբ համապատասխանաբար ավելի քան 25 եւ 31 տոկոսը նման բռնությունը համարում է արդարացված։ Լոռու մարզի տղամարդկանց 56 տոկոսը արդարացնում է նման վարքագիծը։

ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2012

հղիության՝ սեռով պայմանավորված առկա ընդհատումները, երբ նորածինների սեռերի հարաբերակցությունը կազմում է 1.13 տղա՝ յուրաքանչյուր աղջիկ երեխայի հաշվով[29], ակնհայտ են դարձնում Հայաստանի Հանրապետությունում աղջիկների համեմատությամբ տղա երեխաներին տրվող ավելի մեծ նախապատվությունը եւ կանանց ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակը: («Հայաստանում հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների տարածվածությունը եւ պատճառները», 2012 թվական, «Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնությունը. ժողովրդագրական փաստեր եւ վերլուծություն» զեկույց, ՄԱԲՀ, 2013 թվական, «Հարավային Կովկասի կորսված աղջիկները», Համաշխարհային բանկ, ՀՌԿԿ, 2014 թվական): Սույն զեկույցն ավարտուն տեսքի բերելու ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ազգային ժողովին է ներկայացրել օրինագծերի փաթեթ՝ փոփոխություններ կատարելու «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում, ինչպես նաեւ փոփոխություններ ու լրացումներ կատարելու «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում, որով առաջարկվում է օրենքով արգելել հղության՝ սեռով պայմանավորված ընդհատումները:

Կատարվել է վերադարձ դեպի պահպանողականություն եւ հասարակության մեջ տղամարդկանց համեմատությամբ կանանց կարգավիճակի վատթարացում (ԱԶԲ (2015 թ.) «Երկրի գենդերային իրավիճակի գնահատում»): 2011 թվականին կատարված հարցումների արդյունքում մասնակիցների 85%-ը համաձայնել է այն պնդման հետ, որ «որպես կանոն, տղամարդը պետք է լինի կերակրողը» (միայն 14%-ն է կարծում, որ այդ դերը պետք է հավասարապես բաշխվի) (Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան եւ ՄԱԶԾ, 2011 թ.):

Լայնորեն տարածված այն ակնկալիքը, թե կանանց առաջնային դերը կենցաղային դաշտում է, ամրապնդում է այն ընկալումը, թե կանայք չունեն քաղաքական կամ գործարար առաջնորդների ունակություններ, եւ դա հաճախ կանանց ետ է պահում առկա հնարավորություններին հետամուտ լինելուց: Համարվում է, որ բիզնես սկսելու կամ տեղական իշխանություններում առաջադրվելու համար կանայք բավականաչափ սոցիալական կապիտալ կուտակած են լինում միայն այն ժամանակ, երբ նրանք, օրինակ, 40-50-ն անց տարիքում են (այսինքն՝ երեխաներին մեծացնելուց հետո): Հարցազրույցների եւ ֆոկուս-խմբային քննարկումների մի շարք մասնակիցներ նշել են, որ կանայք հաճախ ունենում են նորարարական եւ «լավ գաղափարներ», սակայն, հաշվի առնելով նրանց դերն ու կարգավիճակը, տղամարդիկ են դրանք գործի դնում՝ հաճախ դրանք վերագրելով իրենց (Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան եւ ՄԱԶԾ, 2011 թ.):

### 5.1.2 Կանանց կարգավիճակը Հայաստանի գյուղական շրջաններում. Որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություններ

Վերոհիշյալ կարծրատիպերը եւ աշխատանքների ու պարտականությունների խիստ բաշխումն ըստ սեռի՝ անմիջական ազդեցություն ունեն գյուղաբնակ կանանց կարգավիճակի վրա: Հայաստանի Հանրապետությունում կանանց կարգավիճակի գնահատման նպատակով 2010 թվականին ՀԺԱՀ-ի շրջանակում տեղեկություններ են հավաքագրվել կանանց՝ որոշում կայացնելու ինքնուրույնությունը գնահատելու համար: Այդ նպատակով ՀԺԱՀ-ը գնահատել է ներկայում ամուսնացած կանանց մասնակցությունը երեք տարբեր տեսակի որոշումների կայացմանը, որոնք վերաբերում են նրանց առողջությանը, խոշոր կենցաղային գնումների կատարմանը եւ կնոջ կողմից իր հայրական ընտանիք, ընկերներին ու ազգականներին այցելելուն: 2010 թվականին կատարված Ժողովրդագրության եւ առողջության հարցերի հետազոտության (ՀԺԱՀ) ընթացքում հարցմանը մասնակցած հիմնական կրթություն ունեցող կանանց շուրջ 18 տոկոսը հաստատել է, որ իր եւ ամուսնու վաստակած գումարը տնօրինում է իր ամուսինը: Քաղաքաբնակ կանայք երեք անգամ ավելի հավանական է, որ որոշում կկայացնեն իրենց վաստակած գումարի առնչությամբ՝ ի տարբերություն գյուղաբնակ կանանց (կանանց համապատասխանաբար 34 եւ 11 տոկոսը) (Armenia Demographic and Health Survey, 2010):

29 Տարիներ շարունակ ունենալով բնակչության աճի անկում՝ Հայաստանի կառավարությունն առաջարկել է արգելել հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների պրակտիկան: 2015 թվականին ներկայացվելով Խորհրդարան՝ օրինագիծը, որը մշակվել է Առողջապահության նախարարության կողմից, բացահայտորեն արգելում է հղիության՝ սեռով պայմանավորված բոլոր ընդհատումները եւ, փորձելով փակել այլ ելք գտնելու բոլոր ճանապարհները, մասնավորապես արգելում է առանց բժշկի թույլտվության ընդհատումները հղիության 12-22-րդ շաբաթների ընթացքում: Հղիության հենց այդ ժամանակահատվածում է սկսում երեւալ երեխայի սեռը: Փոփոխություններ են կատարվելու Հայաստանի Հանրապետության «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում եւ Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում: http://armenpress.am/eng/news/832472/sex-selective-abortions-to-be-forbidden-by-law-in-armenia.html

Ընդհանրապես, ընտանիքում ունեցվածքի, ֆինանսական ակտիվների եւ նրանց կառավարման հարցում կանանց դերը՝ որպես որոշում կայացնողներ, բավական ցածր է: Ընտանեկան մակարդակում որոշում կայացնելու իշխանությունը նաեւ կախված է խնդրի կարեւորությունից եւ նրանից, թե դա որքան զգալի ազդեցություն ունի ընտանեկան բյուջեի վրա, այդպիսով կանայք ավելի շատ ներգրավված են առավելապես անկարեւոր որոշումների կայացման գործում («Գենդերային իրավիճակի գնահատում», ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան, Երեւան, 2010 թվական):

Երբ հերթը հասնում է համայնքային մակարդակում որոշումների կայացմանը, որպես կանոն տղամարդիկ են հիմնական որոշում ընդունողները: Ի տարբերություն կանանց՝ տղամարդիկ օգտվում են լիարժեք շարժունակությունից (շարժունակության մասին տե՛ս Բաժին X), եւ հանրության կողմից ակնկալվում է, որ նրանք կներգրավվեն հասարակական կյանքում: Կանանց ձայնը սովորաբար լսելի չէ տեղական համայնքային մակարդակում որոշումների կայացման գործում, եւ կանայք շատ հազվադեպ են ընտրվում որպես համայնքի ավագանու անդամ: 2012 թվականին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները ցույց են տալիս կանանց համար քաղաքական իշխանության հասանելիության ցածր մակարդակ. 638 գյուղական համայնքներում համայնքապետի պաշտոնի համար առաջադրված 1,237 թեկնածուներից ընդամենը 43-ն էր կին (կամ 3.5 տոկոսը), եւ նույնիսկ ավելի քիչ տոկոսն է (2 տոկոսից քիչ) ընտրվել այդ պաշտոնում: Համայնքների ավագանիներում կանայք կազմում են ընտրվածների 8.6 տոկոսը (Հայաստանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում. այլընտրանքային զեկույց, 2009-2012 թթ., էջ 17, ներկայացվել է ԿՆԽՎԿ կոմիտեին (CEDAWC) 2014 թվականին):

Թեեւ գենդերային դերերը բավական ամուր են Հայաստանում, որոշ շրջաններում նշանակալի փոփոխություններ կան, եւ թվում է, որ գենդերային դերերի եւ կանանց կարգավիճակի առումով որոշ մարզերի բնակիչներ մտածելակերպի առումով ավելի պահպանողական են, քան մյուսները («Գենդերային իրավիճակի գնահատում», ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան, Երեւան, 2010 թվական): Այնուամենայնիվ, տղամարդկանց մասին ընկալումը՝ որպես տնային տնտեսության գլխավոր եւ հասարակությունում հիմնական որոշում կայացնողներ ու առաջնորդներ, համատարած է եւ, ընդհանուր առմամբ, իր ազդեցությունն է ունենում կանանց համար քաղաքական պաշտոնների հասանելիության եւ ընդհանրապես հասարակական կյանքում նրանց մասնակցության վրա: Ավանդական դերերի ազդեցությունը ներառում է կանանց ինքնավստահությունը եւ այն ընկալումը, թե ինչն է հարիր, ինչպես նաեւ այն դժվարությունները, որոնց նրանք կարող են բախվել՝ մյուսների կողմից որպես առաջնորդ եւ որոշում կայացնող լրջորեն ընդունվելու դեպքում:

## 5.2 Համայնքային աշխատանք՝ հաջակցություն գյուղաբնակ կանանց հզորացման

Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականությունների, ինչպես նաեւ գենդերային մեյնսթրիմինգի ռազմավարությունների իրականացման հաջողությունը կարելի է, ի թիվս այլ գործոնների, վերագրել նաեւ այս ոլորտում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին: Դրանցից են.

«Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոնը» (CARD)[30], որպես տեղական հայաստանյան հիմնադրամ, ստեղծվել է 2005 թվականի ապրիլին՝ որպես ԱՄՆ Գյուղդեպարտամենտի 13 տարի գործած Մարքեթինգի աջակցության ծրագրի (ԱՄՆ ԳԴ-ՄԱԾ) իրավահաջորդ: CARD-ն ունի երեք հիմնական ծրագրային բաժին՝ Ագրոբիզնես եւ մարքեթինգ, Գյուղի զարգացում եւ Հատուկ ծրագրեր: CARD-ի ծրագրերից են՝ կաթի իրացման ասոցիացիաների եւ այծի պանրի արտադրամասերի ստեղծումը, որոնք երկուսն էլ վերաբերում են գյուղաբնակ կանանց: Մեծ ուշադրություն է դարձվում տեխնիկական օժանդակության եւ կարողությունների զարգացման, մասնավորապես նոր արտադրատեսակների մշակման ու իրացման վրա, եւ նրանք ստեղծել են Հայաստանի գյուղաբնակ երիտասարդության եւ գենդերային զարգացման ծրագիրը՝ Հայաստանի յուրաքանչյուր մարզում տեղակայված ավելի քան 130 խմբակներով: Կանանց ու երիտասարդների հնարավորությունների ընդլայնումը նրանց հայտարարած

30 http://card.am/

նպատակներից մեկն է՝ հաշվի առնելով կազմակերպության գործողությունների շրջանակն ու ազգային մակարդակում տարածվածությունը, այդ թվում՝ տեղական խմբակներն ու անդամության կառուցվածքը:

«Հեյֆեր Հայաստան»-ը հայաստանյան կազմակերպություն է, որը հիմնադրվել է «Հեյֆեր Ինթերնեյշնլ»-ի կողմից, որը 1999 թվականից սկսած Հարավային Կովկասում իրականացնում է մանր ֆերմերներին ուղղված գյուղատնտեսական զարգացման ծրագրեր: Կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում գյուղական համայնքների երիտասարդ սերնդի առաջնորդության զարգացմանը և մասնագիտական վերապատրաստման նախաձեռնությունների իրականացմանը: «Հեյֆեր Հայաստան»-ը Հայաստանի գյուղական համայնքներում ձևավորել և հաջող կերպով ղեկավարում է 29 երիտասարդական ակումբներ: Շուրջ 2,500 երիտասարդներ օգտվել են ընդգրկվելով «Հեյֆեր Հայաստան»-ի կողմից հիմնված երիտասարդական ակումբներում:[31]

«ICARE»-ը՝ «Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը,[32] հայաստանյան ՀԿ է, որը հիմնադրվել է 2005 թվականին՝ Տեխասի A&M համալսարանի կողմից: Այն ղեկավարում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի (ԱՈւԿ) գործունեությունը: ICARE-ը ներգրավված է եղել գենդերային հարցերի վերաբերյալ մի ծրագրում եւ 2006 թվականին կատարել է «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայի շրջանակում գյուղաբնակ կանանց մասնակցության պատճառայնության վերլուծություն» թեմայով հետազոտություն: Չնայած նրանք իրենց գործողություններում, կարծես թե, հատուկ ուշադրություն չեն դարձնում գենդերային հարցերին, սակայն բազմաթիվ հետազոտություններ են կատարում գյուղատնտեսության ոլորտում, որն առնչվում է ՊԳԿ-ի հետ, եւ հավանաբար կարելի է խրախուսել՝ ավելի շատ ուշադրություն դարձնել գյուղաբնակ կանանց վերաբերող խնդիրներին եւ գյուղատնտեսության թեմաներով իրենց վերապատրաստումներում, ուսումնական դասընթացներում եւ պրակտիկայում ավելի շատ կենտրոնանալ գենդերի տարբեր դրսեւորումների շուրջ:

«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» (ՀԵԿԱ) ՀԿ-ի ընդհանուր նպատակն է երիտասարդ կանանց դերի հզորացումը հայաստանյան հասարակության բոլոր ոլորտներում: ՀԵԿԱ-ի աշխատանքը ներառում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը, որի նպատակն է Լոռու մարզի հինգ համայնքներում կանանց ձեռներեցության զարգացումը, եւ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը Հայաստանում՝ հանուն ավելի լավ ապագայի» եւ «Համատեղ ջանքեր հանուն զարգացման» ծրագրերը, որոնք ուղղված են Լոռու մարզում խոտաբույսեր ու հատապտուղներ հավաքող եւ վաճառող գյուղաբնակ կանանց կարողությունների զարգացմանը:

«Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ի առաջնային ուշադրության կենտրոնում մարդու՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքն է: ՀԿՀԱԱՇՄ-ի գործողություններն առնչվում են շրջակա միջավայրի ռեսուրսների կառավարմանը եւ մարդու առողջության վրա աղտոտվածության, կլիմայի փոփոխության եւ այլ էկոլոգիական սթրեսորների ազդեցությանը, ինչպես նաեւ առողջ կենսակերպի խթանմանը: Նրանց գործունեության ուժեղ կողմերից է կանանց՝ որպես փոփոխության գործակալների, ինչպես նաեւ շրջակա միջավայրի դեգրադացումից տուժողների դերի շեշտադրումը, եւ, քանի որ նրանք կապեր ունեն կանանց ռեսուրսային կենտրոնների հետ, ինչպես նաեւ անմիջականորեն աշխատում են գյուղաբնակ կանանց հետ, այստեղ կարող են լինել համագործակցության հնարավորություններ:

«Կապանի փոքր ֆերմերների ասոցիացիան» (ԿՓՖԱ) տեղական ՀԿ է, որը գործում է Սյունիքի մարզում: Կազմակերպությունն աջակցում է գյուղաբնակ կանանց՝ կարողությունների զարգացման, իրազեկության բարձրացման եւ գյուղաբնակ/ֆերմերային գործունեությամբ զբաղվող կանանց հնարավորությունների ընդլայնմանն առնչվող այլ գործողությունների միջոցով:

«Շեն» ՀԿ-ի[33] նպատակն է հեռավոր եւ խոցելի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ու հզորացման խթանումը: «Շենը» մեծ փորձ ունի Հայաստանի գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական կենսապահովման միջոցների գենդերային

31 http://www.heifer.org.
32 https://www.icare.am/icare/
33 http://www.shen.am/

կողմերին անդրադառնալու գործում եւ ծրագրեր է իրականացնում Հայաստանի գրեթե բոլոր մարզերում՝ կին շահառուների առնվազն 30 տոկոսի ներգրավմամբ:

«Սյունիքի կանանց ռեսուրս կենտրոնների ցանցը» (ՍԿՌԿՑ)[34] միավորում է Մեղրիում, Կապանում եւ Գորիսում գործող Կանանց ռեսուրս կենտրոնները: Նրա նպատակն է համագործակցության ու քաղաքացիական ներգրավվածության միջոցով կանանց հնարավորությունների ընդլայնումը եւ ազգային, մարզային ու տեղական մակարդակներում գործարար կանանց մրցունակության խթանումը: Ցանցը հիմնադրվել է ԵԱՀԿ-ի աջակցությամբ, սակայն ներկայում այն ինքնակառավարվող կառույց է:

«ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ն միավորում է տպագիր ու էլեկտրոնային մամուլի լրագրողների, գենդերի հարցերով զբաղվող փորձագետների ու գիտակրթական բնագավառի աշխատակիցների, որոնք մասնագիտացած են գենդերային լրագրության, կանանց հնարավորությունների ընդլայնման եւ գենդերային մեյնսթրիմինգի ոլորտներում: ՀԿ-ի փորձագետներն ունեն լրագրողների համար դասընթացներ անցկացնելու, հետաքննական, քաղաքական ու գենդերային լրագրության ոլորտներում ուսումնական դասընթացներ ու մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպելու փորձ, ինչպես նաեւ ունեն մշտադիտարկում եւ այլ հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ հմտություններ, փորձ ու գիտելիքներ: 2011-2015 թվականներին ՀԿ-ն հետազոտություն է կատարել գյուղատնտեսության ոլորտում գենդերային հարցերի շուրջ, այդ թվում՝ «ՀՀ Տավուշի մարզի 2012-2015 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի գենդերային ուղղորդում», «Կնոջ դերն ու ներդրումը գյուղատնտեսության արժեշղթայում» ելակետային ուսումնասիրություն, «Գյուղատնտեսության ոլորտի զարգացման ռազմավարությունների գենդերային ուղղորդման բարելավման» մասին համառոտ վերլուծություն, «Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի գենդերային ուղղորդման ձեռնարկ», եւ «ՀՀ գյուղի եւ գյուղատնտեսության կայուն զարգացման 2015-2025 թթ. ռազմավարության գենդերային ուղղորդում»: 2012-2015 թվականներին ՀԿ-ն WomenNet.am վեբկայքում[35] անց է կացրել «Հզորացնենք գյուղի կանանց. վերջ սովին ու աղքատությանը» թեմայով քարոզարշավ՝ ավելի քան 80 նյութերով, եւ «Կանայք եւ առողջ սնուցում» քարոզարշավը՝[36] ավելի քան 40 նյութերով, 2007-2015 թվականներին պատրաստել է «Կինը եւ քաղաքականությունը» թերթի ավելի քան 10 թողարկում՝ նվիրված գյուղաբնակ կանանց հնարավորությունների ընդլայնմանը, հրատարակել է «Գյուղի կանանց դերի ճանաչում եւ արժեւորում» վերնագրով հաջողության պատմությունների հավաքածու:

Գյուղատնտեսական նշանակալի հետազոտություններ են կատարվում Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության Գիտության, կրթության եւ խորհրդատվության վարչության միջոցով: Խորհրդատվական ծառայությունները, որոնք ներառում են վերապատրաստումներ, դաշտային ցուցադրություններ, տեղեկատվական նյութեր ու մարքեթինգային տեղեկություններ, գյուղացիներին տրամադրվում են 2000 թվականին հիմնադրված Գյուղատնտեսության աջակցության տասը մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) միջոցով: ԳԱՄԿ-երը գյուղերում ունեն գործակալներ, որոնք աջակցություն են ցուցաբերում 916 համայնքի՝ երկրով մեկ: ԳԱՄԿ-երը տեխնիկական աջակցություն են ստանում Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնից, Հայաստանի ազգային ագրարային համալսարանից (ՀԱԱՀ), ագրոգիտական մասնագիտացված կենտրոններից եւ մարզային պետական գյուղատնտեսական քոլեջներից: Գյուղատնտեսության նախարարությունը ստեղծել է գյուղատնտեսական հետազոտություն իրականացնող յոթ կազմակերպություն, որոնք գործում են որպես պետական ոչ առեւտրային կազմակերպություններ եւ որոնք տրամադրում են նաեւ խորհրդատվական ծառայություններ (պտղաբուծության եւ անասնաբուծության մեջ նոր տեխնոլոգիաների ներդնում եւ մշակաբույսերի ու գյուղատնտեսական կենդանիների նոր սորտերի ու ցեղատեսակների ներմուծում):

«Գյուղատնտեսական դաշինքը» հիմնադրվել է 2011 թվականին: Այն միավորում է 14 տեղական ու միջազգային կազմակերպություններ, որոնք ի մի են բերում իրենց ջանքերն ու փորձառությունը՝ գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրները լուծելու համար: Դաշինքի հիմնական նպատակներից մեկն է՝ բացահայտել եւ լուծել գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրները, խթանել տեղական գյուղատնտեսական արտադրանքի սպառումը, պաշտպանել փոքր ֆերմերների իրավունքները, ձեռնարկել քայլեր գյուղատնտեսության ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը բարելավելու ուղղությամբ, եւ ստեղծել ոլորտի զարգացմանն ուղղված

34 http://www.syunikwrc.net/gpages.php?id=5
35 www.WomenNet.am
36 http://womennet.am/en/%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B5%D1%80%D0%B0/

արդյունավետ մեխանիզմներ: 2013 թվականին Գյուղատնտեսության նախարարության եւ Գյուղատնտեսական դաշինքի միջեւ կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն էր ապահովել համագործակցության շրջանակ եւ նախաձեռնել համատեղ քայլեր՝ գյուղատնտեսության ոլորտի խնդիրները լուծելու համար: Գյուղատնտեսական դաշինքը կազմել եւ հրատարակել է մի շարք ծրագրային փաստաթղթեր, որոնք իրենց դրական ազդեցությունն են ունեցել այս ոլորտում, հատկապես վարկային քաղաքականության, գյուղատնտեսական կոոպերատիվների առնչությամբ օրենսդրական փոփոխություններ ու լրացումներ կատարելու եւ ազգային քաղաքականություններում գենդերային մեյնսթրիմինգի մեջ փոփոխություններ առաջ բերելու գործում: 2014 թվականին դաշինքի գործունեության շրջանակում եւ «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ի հետ համագործակցությամբ կատարել են «Գյուղի եւ գյուղատնտեսության կայուն զարգացման 2015-2025 թթ. ռազմավարության» նախագծի գենդերային ուղղորդումը:

# 6. Եզրակացություններ եւ առաջարկություններ

## 6.1 Եզրակացություններ

Գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման ոլորտներում հիմնական գենդերային անհավասարությունները, որոնք սահմանվել են սույն զեկույցում, հետեւյալն են.

1. **Օրենսդրության եւ կիրարկման միջեւ ճեղքվածքը.**

- Չնայած գենդերային անհավասարությունները կրճատելու ուղղությամբ վերջին երկու տասնամյակում կառավարության գործադրած ջանքերին, օրենսդրության եւ կիրարկման միջեւ գոյություն ունի ճեղքվածք:
- Դեռեւս անհրաժեշտ են ամուր փոխադարձ կապեր Գենդերային հարցերով գործողությունների ծրագրի եւ գյուղատնտեսության ու գյուղական շրջանների զարգացման գործողությունների պլանների եւ քաղաքականությունների միջեւ:
- Գենդերային անհավասարությունները շարունակում են մնալ հանրայնորեն ընդունված կամ հանդուրժվում են, հատկապես գյուղական շրջաններում, որտեղ, համաձայն արձանագրությունների, գենդերային անհավասարություններն ավելի սուր են, ինչը գենդերային հավասարության վերաբերյալ քաղաքականությունների իրականացումը դարձնում է էլ ավելի դժվար:
    - Գյուղատնտեսության հատվածում գենդերային վիճակագրությունն անհրաժեշտ է զգալիորեն կատարելագործել՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Հայաստանի երրորդ եւ չորրորդ պարբերական համատեղ զեկույցների վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումների համաձայն (Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ):

2. **Կանայք գերներկայացված են ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում, ընտանեկան ֆերմաներում չվճարվող աշխատանքներում, եւ տնային գործերում**

- Զբաղվածություն ունեցողների մոտավորապես 34.8 տոկոսը ներգրավված է գյուղատնտեսության մեջ, որոնցից մոտ 56 տոկոսը կանայք են (Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, 2015 թվական, էջ 61)
- Գյուղատնտեսության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների շրջանում կանանց մասնաբաժինը կազմում է 82.1 տոկոս՝ ի հակադրություն ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող տղամարդկանց, որոնք կազմում են 60.8 տոկոս (Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, 2015 թվական, էջ 61): Եթե դիտարկում ենք միայն ոչ ֆորմալ զբաղվածությունը, այն դեպքում, երբ տղամարդկանց բաժին է ընկնում գործատուների ավելի քան 80 տոկոսը, կանայք ոչ ֆորմալ զբաղվածության հատվածում կազմում են այսպես կոչված «այլ»-ի 83 տոկոսը (Կանայք եւ տղամարդիկ Հայաստանում, 2015 թվական): Սա կարող է կապված լինել ընտանեկան Ֆերմաներում աշխատող եւ չվճարվող կանանց գերներկայացվածության հետ:
- Աշխատաշուկայում առկա է ուղղահայաց եւ հորիզոնական սեգրեգացիա, ինչը հանգեցնում է վարձատրության՝ սեռով պայմանավորված հսկայական անհավասարության, որի դեպքում կանանց վարձատրության միջին չափը կազմում է տղամարդկանց վարձատրության մոտ 65.9 տոկոսը (Կանայք եւ տղամարդիկ Հայաստանում, Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):
- Տղամարդկանց շրջանում երկարաժամկետ աշխատանքային միգրացիայի բարձր մակարդակը ավելացնում է կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունների քանակը, եւ գյուղական ընտանիքների 27.2 տոկոսում գլխավորը կինն է (Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը, ԱՎԾ, 2015 թվական): Հավանականությունը, որ կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունները կհայտնվեն ծայրահեղ աղքատության մեջ, մի փոքր ավելի է, քան տղամարդկանց կողմից գլխավորվող տնային տնտեսությունների դեպքում: Սա տեղի է ունենում մասամբ այն պատճառով, որ գյուղական շրջաններում եկամտի ստեղծման

- հնարավորությունները կանանց համար ավելի սահմանափակ են, եւ գոյություն ունի սեռով պայմանավորված անհավասար վարձատրություն, սակայն հիմնական պատճառն այն է, որ կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունները որպես կանոն մեկ գլխավոր ունեցող ընտանիքներ են, ինչը սահմանափակում է աշխատունակ տարիքի անձանց թիվը, ովքեր ի վիճակի են իրենց նպաստը բերել ընտանիքի եկամտի ստեղծմանը:
- Ընտանեկան ֆերմաներում ոչ պաշտոնապես աշխատող գյուղացի կանայք Աշխատանքային օրենսգրքով սահմանված որեւէ փոխհատուցում չեն ստանում, օրինակ՝ հիվանդության պատճառով արձակուրդ եւ երեխայի խնամքի նպաստ, քանի որ այդ կանայք համարվում են կամ ինքնազբաղված, կամ ոչ ակտիվ: Գյուղական համայնքներում՝ զբաղվածություն ունեցող կանանց երկու երրորդը դրամային եկամուտ չի ստանում, երբ ինքնազբաղված է («Հայաստանի գենդերային բարոմետր» հետազոտություն, Երեւանի պետական համալսարան, 2015 թվական):
- **Ընտանեկան ֆերմաներում շարունակում է գոյություն ունենալ աշխատանքների կարծրատիպային բաժանում, որի դեպքում** տղամարդիկ հակված ներգրավվել այնպիսի աշխատանքներում, որոնք պահանջում են զգալի կապիտալ ներդրումներ, ներառյալ՝ սարքավորումներ եւ տեխնոլոգիաներ, ինչպես նաեւ այն աշխատանքներում, որոնք ավելի լավ են վճարվում: Աշխատանքների նման բաժանումն առաջացնում է գյուղատնտեսական ակտիվների եւ որոշումների կայացման նկատմամբ սահմանափակ հասանելիություն եւ վերահսկողություն:

### 3. Կանանց համար գյուղատնտեսության վերաբերյալ տեխնիկական գիտելիքների անբավարար հասանելիություն, ներառյալ տեղեկությունների հասու լինելու եւ օժանդակ ծառայություններից ու վերապատրաստման դասընթացներից օգտվելու հետ կապված դժվարությունները

- Գյուղատնտեսության բնագավառում կանանց կրթության ցածր մակարդակը նշանակում է, որ շատ ավելի փոքր է հավանականությունը, որ նրանք կզբաղեցնեն որոշումներ կայացնող եւ ղեկավար պաշտոններ գյուղատնտեսական ոլորտներում, հետեւաբար՝ գյուղատնտեսության բնագավառում կանանց ձայնը չի լսվում, եւ նրանց կարծիքը չի արտահայտվում քաղաքականության մեջ, ինչը իր հերթին սահմանափակում է նորարարությունները պարենային ապահովության եւ սնուցման ոլորտներում:
- Չնայած հետբուհական եւ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած լինելու հավանականությունն ավելի բարձր է կանանց շրջանում, հավանականությունը, որ վերջիվերջո նրանք կստանան գիտական աստիճան, փոքր է (Կանայք եւ տղամարդիկ Հայաստանում, Վիճակագրական գրքույկ: Երեւան. ԱՎԾ, 2015 թվական), իսկ դոկտորի աստիճան ունեցողների շրջանում կանայք կազմում են ընդամենը 28 տոկոս («Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, 2015 թվական): Համալսարանական մակարդակում գոյություն ունի նաեւ հորիզոնական սեգրեգացիա: Տղամարդկանց թիվը գյուղատնտեսության եւ սննդի արդյունաբերության բնագավառի պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում գերազանցում է կանանց թվին 70/30 տոկոս հարաբերակցությամբ, իսկ գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության եւ մաթեմատիկայի գծով շրջանավարտների միայն 38 տոկոսն է կին («Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, 2015 թվական):
- Կանայք նաեւ սահմանափակ մասնակցություն ունեն գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացման վերաբերյալ դասընթացներին, գիտելիքի եւ տեղեկությունների փոխանակմանը: Օժանդակ ծառայությունների թեմայով դասընթացներին կանանց մասնակցության այս ցածր մակարդակի պատճառների մի մասը հետեւյալն է.
    - Տեղեկատվության փոխանակման «տղամարդկանց գերիշխանություն», ինչի հետեւանքով տեղեկատվությունը չի հասնում կին ֆերմերներին.
    - Տղամարդկանց նույնականացումը՝ որպես տնային տնտեսությունների գլխավորներ եւ սեփականության տիրապետողներ. ի հետեւանք, կանայք հիմնականում դիտարկվում են որպես «ֆերմերի կին»՝ որպես ինքնուրույն ֆերմեր ընկալվելու փոխարեն.
    - Սարքավորումներ, տեխնոլոգիաներ եւ տղամարդ կարծրատիպային շղթա
    - Հողի գրանցումը տղամարդկանց անունով՝ որպես «տնային տնտեսությունների գլխավորներ»

- ○ Կանանց ցածր ինքնագնահատականը այն ոլորտներում, որոնք հանրայնորեն չեն վերագրվում իրենց՝ հիմնվելով գենդերային դերերի եւ կարծրատիպերի վրա:
- ○ Դասընթացների եւ հանդիպումների անցկացման վայրերը. տրանսպորտային միջոցների հասանելիությունը կանանց համար սահմանափակ է. միջոցառումների անցկացման որոշ վայրեր կարող են կանանց ետ պահել մասնակցելուց, եւ որոշ կանայք գուցե ստիպված լինեն ստանալ իրենց ամուսինների թույլտվությունը:

### 4. Ենթակառուցվածքներ եւ ժամանակի օգտագործում

- Քանի որ տնային տնտեսություններում կանայք ջրի հիմնական օգտագործողներն են, ինչը կապված է կանանց գենդերային դերերով պայմանավորված կենցաղային աշխատանքների հետ, նրանք լրջորեն տուժում են ջրի սպառման սահմանափակումներից (ԱԶԲ (2015), Հայաստանի գենդերային գնահատում): Այն դեպքերում, երբ չկա կենտրոնացված ջրամատակարարում, կանայք նաեւ պատասխանատու են ձեռքով ջրի տեղափոխման համար (ԱԶԲ (2015), Հայաստանի գենդերային գնահատում), ինչը հանգեցնում է նրանց աշխատաժամանակի լրացուցիչ ծանրաբեռնման:
- Ենթակառուցվածքների զարգացումը եւ տնային տնտեսությունների արդիականացումը ավելի ցածր մակարդակի է գյուղական շրջաններում, ներառյալ՝ լվացքի մեքենաների, սպասքի լվացման մեքենաների եւ կենցաղային այլ տեխնիկայի օգտագործումը, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների սահմանափակ օգտագործումը եւ նրանց սահմանափակ շարժունակությունը:
- Սա անմիջական ազդեցություն ունի գյուղացի կանանց ծանրաբեռնվածության վրա, քանի որ կենցաղային աշխատանքները եւ վերարտադրողական գործառույթները կարծրատիպերի ուժով կապվում են կանանց գենդերային դերերի հետ: Կանանց կենցաղային ծանրաբեռնվածությունը երկուշաբթիից կիրակի կազմում է օրական 6:06 ժամ, մինչդեռ քաղաքային բնակավայրերում ապրող կանանց դեպքում այս ծանրաբեռնվածությունը կազմում է օրական 4:53 ժամ, իսկ գյուղացի տղամարդկանց դեպքում՝ 2: 37 ժամ («Հայաստանի կանայք եւ տղամարդիկ», Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):

### 5. Հողերի մեծ մասը գրանցված է եւ կառավարվում է տղամարդկանց կողմից, իսկ կանանց կողմից հողի սեփականության նկատմամբ իրենց իրավունքների դե ֆակտո իրացումը բախվում է խոչընդոտների:

- Հողի սեփականության նկատմամբ կանանց սահմանափակ հասանելիությունը բացատրվում է հետեւյալով.
  - ○ Գրանցման գործընթաց. Չնայած հողը քաղաքացիներին հատկացվել է անկախ նրանց սեռից, փաստացի բաշխումը եւ գրանցումը կատարվել են այն մարդկանց միջեւ եւ անունով, որոնք համարվել են «տնային տնտեսությունների գլխավոր»:
  - ○ Պատրիլոկալ ամուսնություններ. Պատրիլոկալ են անվանվում այն ամուսնությունները, որոնց դեպքում հարսը տեղափոխվում է ամուսնու տուն՝ ապրելու վերջինիս ընտանիքի հետ. դրանք առավել տարածված են գյուղական բնակավայրերում: Ամուսնության այսպիսի ավանդական տեսակի դեպքում կանայք սովորաբար չեն պահանջում հողի սեփականության իրենց իրավունքը ո՛չ իրենց սեփական ընտանիքներում, ո՛չ էլ նոր խորթ ընտանիքներում, որովհետեւ մտավախություն ունեն, որ դա կարող է դիտվել որպես իրենց ընտանիքների հետ առճակատում:
  - ○ Ժառանգության հետ կապված գործելակերպեր. Գոյություն ունի հողը տղա ժառանգներին տալու նախապատվություն, հատկապես պատրիլոկալ ամուսնությունների համատեքստում, երբ սովորաբար որդիներն են մնում ընտանիքում, եւ ակնկալվում է, որ նրանք են վարելու ընտանեկան տնտեսությունը:
  - ○ Գյուղական բնակչության, հողի մասնագետների եւ քաղաքացիական ծառայողների՝ հողի նկատմամբ կանանց իրավունքների մասին գիտելիքի պակաս:
- Կանանց՝ հողի սեփականության իրավունքից դե ֆակտո սահմանափակ կերպով օգտվելն անմիջական հետեւանքներ ունի կանանց համար հենց այդ հողի

օգտագործման վերաբերյալ որոշումներ կայացնելու, օժանդակ ծառայությունների եւ փոխառության համար գրավի եւ ձեռներեցությամբ զբաղվելու հասանելիության առումով:

- Դեռեւս չկան հողի գրանցման վերաբերյալ ըստ սեռի ապախոշորացված տվյալներ, այդուհանդերձ, գյուղերում տնային տնտեսությունների ընդամենը 26.5 տոկոսն են գլխավորում կանայք (Կանայք եւ տղամարդիկ Հայաստանում, Վիճակագրական գրքույկ, ԱՎԾ, 2015 թվական):

### 6. Վարկային միջոցների եւ ձեռներեցության սահմանափակ հասանելիություն

- Կանանց համար սարքավորումների եւ տրանսպորտային միջոցների սահմանափակ հասանելիությունն ու դրանց նկատմամբ սահմանափակ հսկողությունը խոչընդոտում են եկամուտ վաստակելու նրանց հնարավորությունները եւ շուկաների հասանելիությունը:
- Քաղաքային ու մեծ շուկաների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների անհասանելիությունը կարծրատիպային պատկերացումների պատճառով:
- Այլ խոչընդոտներ, որ կանայք ստիպված են հաղթահարել նախքան գործարարությամբ զբաղվելը, ներառում են անորոշության զգացումը եւ ռիսկի դիմելուց խուսափելը, պակաս ինքնավստահությունը այն ոլորտներում, որոնք սոցիալական կամ կարծրատիպային առումով չեն վերագրվում կանանց, գործարար կապերի բացակայությունը, տնտեսության մեջ եւ մասնավորապես բիզնեսում կանանց դերի ու մասնակցության վերաբերյալ արմատացած ու պահպանվող կարծրատիպերը:
- Նյութական պատճառներից են՝ վարկեր ստանալու դժվարությունները, դրամական միջոցների ու գրավի համար գույքի սահմանափակ հասանելիությունը, ծանր տոկոսադրույքները, անբարենպաստ բիզնես միջավայրը, շարժունակության հետ կապված խոչընդոտները, մեծ շուկաների սահմանափակ հասանելիությունը եւ բիզնեսը հեշտացնելու նպատակով պետական պաշտոնյաներին տրվող ոչ պաշտոնական վճարումները (Գենդերային իրավիճակի գնահատում, ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան):
- Արտադրական ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը լուրջ խոչընդոտ է գյուղաբնակ կանանց համար՝ գյուղատնտեսական ձեռներեցությամբ կամ ֆերմերային տնտեսության կառավարմամբ զբաղվելու համար: Օրինակ՝ գյուղաբնակ կանանց համար քիչ հասանելի է կամ հասանելի չէ գյուղատնտեսական տեխնիկան, ինչպիսիք են՝ տրակտորները, կոմբայնները եւ հնձիչ մեքենաները: Տեխնիկան կարծրատիպորեն կապված է տղամարդու գենդերային դերի հետ («Զրից դեպի շուկա» բաղադրիչի գենդերային մոտեցումները, ՀՄՀ-Հայաստան, հունվար, 2011 թվական): Գյուղական բնակավայրերում մեքենաների ավելի քան 95 տոկոսի սեփականատերերը, ինչպես նաեւ մարզերում գյուղատնտեսական տեխնիկա վարողների 100 տոկոսը տղամարդիկ են («Զրից դեպի շուկա» բաղադրիչի գենդերային մոտեցումները, ՀՄՀ-Հայաստան, հունվար, 2011 թվական):
- Մատակարարների հետ աշխատելը եւ գյուղերից դուրս գտնվող խոշոր շուկաներից օգտվելը նույնպես կապվում են տղամարդկանց գենդերային դերերի հետ:

### 7. Պարենային ապահովություն եւ սնուցում

- Փաստերով հիմնավորված է, որ կանանց գլխավորությամբ աղքատ ընտանիքներում երեխաները սնուցման ավելի լավ արդյունքներ են ունենում, քան տղամարդկանց գլխավորությամբ ընտանիքներում, եւ երբ կանանց հնարավորություններն ընդլայնվում են, բարելավվում է ողջ ընտանիքի սնուցումը (Էյլին Քենեդի եւ Փոլին Փիթըրս, 1992 թ., «Տնային տնտեսության պարենային ապահովությունը եւ երեխայի սնուցումը. տնային տնտեսության գլխավորի եկամտի ու սեռի փոխհարաբերությունը», Համաշխարհային զարգացում 20):
- Աշխատանքի բաշխման, ռեսուրսների հասանելիության, սեփականության եւ տնային տնտեսության մեջ հսկողության հարցերում գենդերային անհավասարություններն անմիջական ազդեցություն ունեն ողջ ընտանիքի առողջության վրա: Երբ թե՛ մայրերը եւ թե՛ հայրերը կիսում են պատասխանատու ծնող լինելու պարտականությունը, բարելավվում են նաեւ ողջ ընտանիքի առողջությունն ու սնուցումը:

## 8. Գյուղական բնակավայրերում կանանց ցածր կարգավիճակը եւ պահպանվող գենդերային կարծրատիպեր

- Կանայք սովորաբար ընկալվում են երեխաներին խնամելու եւ կենցաղային աշխատանքների հետ՝ անկախ նրանից՝ աշխատում են տնից դուրս, թե ոչ, իսկ տղամարդիկ սովորաբար ընկալվում են որպես իրենց ընտանիքի տնտեսական բարեկեցության ու գոյատեւման համար պատասխանատու՝ որպես հիմնական կերակրողը եւ ընտանիքի գլխավորը (Հայաստանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, «Գենդերային իրավիճակը Հայաստանում», 2005 թ., 2014 թվական): Սա ուղղակիորեն կապված է կարծրատիպային գենդերային դերերի հետ եւ անմիջական ազդեցություն ունի ռեսուրսների ու տնտեսական հնարավորությունների հասանելիության եւ չվարձատրվող, տնային գործերում եւ վերարտադրողական գործառույթի կատարման հարցերում կանանց իսկայական ծանրաբեռնվածության վրա: Սա կարող է հանգեցնել ժամանակի բացակայության, կանանց՝ եկամտաբեր գործունեության մեջ ներգրավվելու կարողությունների սահմանափակման, կանանց ինքնավստահության նվազեցման այնպիսի ոլորտներում, որոնք կարծրատիպորեն նրանց չեն վերագրվում, եւ կանանց տնտեսական կախվածության:
- Յուրաքանչյուր աղջիկ երեխայի հաշվով 1.13 տղա նորածնի սեռային հարաբերակցությամբ եւ 100 կենդանի ծննդին 27.5 հղիության արհեստական ընդհատմամբ ու մեռելածնությամբ հանդերձ՝ Հայաստանում դեռեւս տարածված է հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումը:[37]Սա ապացույց է տղաներին աղջիկներից գերադասելու եւ հասարակության մեջ կանանց ավելի ցածր կարգավիճակի մասին («Հայաստանում հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների տարածվածությունը եւ պատճառները», ՄԱԲՀ, 2012 թվական, «Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնությունը. ժողովրդագրական փաստեր եւ վերլուծություն» զեկույց, «Հարավային Կովկասի կորսված աղջիկները», Համաշխարհային բանկ, ՀՌԿԿ, 2014 թվական):
- Պատրիլոկալ ամուսնությունները, երբ աղջիկները տեղափոխվում են ապրելու իրենց ամուսինների ընտանիքների հետ, կարող է լինել այն պատճառներից մեկը, որով բացատրվում է որդիների համեմատությամբ դուստրերին պակաս նախապատվություն տալը:
- Հասարակության մեջ կանանց կարգավիճակի մեկ այլ ցուցիչ է իրենց վաստակի նկատմամբ վերահսկողությունը: Քաղաքաբնակ կանայք, ի տարբերություն գյուղաբնակ կանանց (կանանց համապատասխանաբար 34 եւ 11 տոկոսը), երեք անգամ ավելի մեծ հավանականությամբ որոշում կկայացնեն իրենց վաստակած գումարի առնչությամբ («Հայաստանում հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների տարածվածությունը եւ պատճառները», ՄԱԲՀ, 2012 թվական, «Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնությունը. ժողովրդագրական փաստեր եւ վերլուծություն» զեկույց, «Հարավային Կովկասի կորսված աղջիկները», Համաշխարհային բանկ, ՀՌԿԿ, 2014 թվական):
- Ինչ վերաբերում է կանանց ձայնին, ապա 2012 թվականին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները ցույց են տալիս կանանց համար քաղաքական իշխանության հասանելիության ցածր մակարդակ. 638 գյուղական համայնքներում համայնքապետի պաշտոնի համար առաջադրված 1,237 թեկնածուներից ընդամենը 43-ն էր կին (կամ 3.5 տոկոսը), եւ նույնիսկ ավելի քիչ տոկոսն է (2 տոկոսից քիչ) ընտրվել այդ պաշտոնում: Համայնքների ավագանիներում կանայք կազմում են ընտրվածների 8.6 տոկոսը (Հայաստանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում. այլընտրանքային զեկույց, 2009-2012 թթ., էջ 17, ներկայացվել է ԿՆԽՎԿ կոմիտեին (CEDAWC) 2014 թվականին):
- Գյուղաբնակ կանանց սոցիալական կարգավիճակի գնահատման մեկ այլ կարեւոր ցուցիչ է գենդերային բռնության նկատմամբ կանանց ու տղամարդկանց վերաբերմունքի գնահատումը: Առավել հավանական է, որ այն կանայք, որոնք գտնվում են բարեկեցության ամենացածր քվինտիլում (20 տոկոս), ունեն

37 Տարիներ շարունակ ունենալով բնակչության աճի անկում՝ Հայաստանի կառավարությունն առաջարկել է արգելել հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների պրակտիկան: 2015 թվականին ներկայացվելով Խորհրդարան՝ օրինագիծը, որը մշակվել է Առողջապահության նախարարության կողմից, բացահայտորեն արգելում է հղիության՝ սեռով պայմանավորված բոլոր ընդհատումները եւ, փորձելով փակել այլ ելք գտնելու բոլոր ճանապարհները, մասնավորապես արգելում է առանց բժշկի թույլտվության ընդհատումները հղիության 12-22-րդ շաբաթների ընթացքում: Հղիության հենց այդ ժամանակահատվածում է սկսում երեւալ երեխայի սեռը: Փոփոխություններ են կատարվելու Հայաստանի Հանրապետության «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում եւ Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում: http://armenpress.am/eng/news/832472/sex-selective-abortions-to-be-forbidden-by-law-in-ar-menia.html

